Այն նյութերը, վորոնք անմիջապես մտնում են արտադրության մեջ (առանց պահեստ տարվելու), ընդունվում են նույնպիսի (նույն ձևի) ակտերով այն անձանց կողմէց, վորոնց տրամադրության տակ են անցնում այդ նյութերը։ Այդ անձինք ընդունումը կատարում են ընդհանուր հիմունքներով և ընդունման ակտերն իրենց բոլոր փաստաթղթերով ներկայացնում են այն պահեստին, վորոն սպասարկում են յութերն բեռնաթափելու վայրը։ Ընդունման ակտերում պետք ե լինի առլանգիտ շտեմպելը և այն անձանց ստորագրությունը, վորոնք պատասխանատու յեն ընդունման ճշտության, ինչպես և նյութերի լավ պահպանված լինելու համար։

Ընդունման ակտերը կազմում են 3 որինագիրց պատճենահան թղթով. գրանցից լերկուսը որվա հաշվետվության հետ միասին ներկայացնում են նյութական մասը, իսկ մեկը թողնում են ընդունման վայրում: Ակտերն ստորագրում են նյութերի ընդունման բոլոր մասնակիցները:

Աշխատանքի վայրում անմիջականորեն ստացվող նյութերի ընդունման ակտերը կազմում են չորս որինակից, վորից յերեքն ուղարկում են պահեստ, իսկ չորրորդը մնում է բնդունողի մոտ:

Արտադրությունից վերադարձվող նյութերը (մնացորդներ խոտան և այլն) պահեստներն ընդունում են բիոնազմերով, վոր կազմվում և ստորագրվում են տեղիքում առաքողների կողմից (տես եջ 33):

Պահեստ հանձնվող յուրաքանչյուր նյութի կամ նոռարկայի համար կօգնմէում և առանձին բեռնագիր, ըստ վորում նրանց մեջ անպայման նշվում և նաև աշխատանքի տեսակը կամ ծախքի անունը, վորի համար իր ժամանակին նյութերը կամ իրերը պահեստից պահանջվել են: Բեռնագիրը կազմվում և յերեք որինակից և ուղարկվում ե պահեստ, վորոնցից մեկը վերադարձվում և հանձնորին պահեստի ստորագրությամբ նյութերը ընդունելու մասին, իսկ յերկուսը մնում ե պահեստում:

1

אלה עליון

卷之三

Ակատում նշված նյութերն ընդունեց  
Հանձնաժողովի հետախոսությունը

Նյութերի պահեստից բաց թողնումը կատարվում և սպառազների (ցեխների վարիչների և այլն) պահանջագրերով։ Նույթերի պահանջագրեր տալու և ստորագրելու իրավունք ունեցող անձանց ցուցակը, ինչպես և նրանց ստորագրությունների նմուշները վաղորոք պետք և հաղորդվեն պահեստներին և գլխավոր հաշվապահությանը։ Վոչ մի դեպքում չի թույլատրվում նյութեր տալ ըստ այն պահանջների այն անձանց կողմից վորոնք չեն հրաշտակված ցուցակում և վորոնց ստորագրության նմուշները պահեստներում չկան Նման պահանջներով նյութեր բաց թողնելու դեպքեր հայտնաբերվելիս ամբողջ պատահանատվությունն ընկնում և պահեստների վարիչների և պահեստապետների (վլագօվազ) վրա:

Յուրաքանչյուր պահանջ դուրս է գրվում մեկ նյութի և ծախքի մի վորոշ հաշվալին առարկայի համար (վորոշ պատվերի կամ աշխատանքի տեսակի համար) (տես նջ 34.):

Պահանջները գրվում են չորս որինակից (միանդամից պատճենաթղթով). մի որինակ մնում է սպառողների մոտ պահանջների գրքույկում, իսկ յերեք որինակը ներկայացվում է պահեստ. այդ յերեք որինակից մեկը նյութերի հետ միասին վերադարձվում է սպառողներին իսկ յերկուսը մնում է պահեստում. Կարգադրերի մշակումը հեշտացնելու նպատակով, նրանց առանձին որինակները պատրաստվում են տարբեր գույներով:

Պահանջագրերի ըոլոր սլունակները սպառողները լրացնում են պարզ, վարոշակի և մանրամասն, ուշալրություն դարձնելով ծախք-առարկայի և նույնի անվան ճիշտ նշանակման վրա: Պահեստի գարբիչները կամ պահեստապետները պարագաներ են առանց կատարելու վերադարձներ այն պահանջագրերը, վորոնց սյունակները կամ բոլորին չեն լրացված, կամ մանրամասն, պարզ կամ խսկությամբ չեն լրացված: Պահանջագրերում սպառողները լրացնում են միայն «բաց թողնել» մասում նախատեսած տվյալները, մեացած մասերը պահանջագրերը դրելիս չեն լրացվում:

Պահանջագրերն ստանալով պահեստի վարիչները կամ պահեստապետները հետևյալ կերպ են վարփում՝

ա) ստուգում են, թե պահանջագրերի բոլոր սյունակները ճիշտ լրացված են արդյոք:

բ) ստորագրությունների նմուշներով ստուգվում են, թե արդյաք պահանջապերել նրանք են ստորագրել ովքեր իրավունք ունեն, թե ուրիշները:

գ) հաշվառման քարտարկղի տվյալներով վորոշում են պահանջագրե-  
սով պահանջվոծ քանակով նկութեր բաց թողնելու հնարավորությունը.

զ) պահանջագրերի ըոլոր որբնակներում (պատճենաթղթով և փառ-

տողեն բաց ե թողնվածք սլունակում) նշանակում են բայց թողնվելիք նյութերի քանակը.

**յԵ**՝ միաժամանակ բաց թողնչող նկութերի քանակը նշանակելիութելոր որինակներում, հատուկ սյունակում նշանակվում է այդ նյութերի մնացորդը, վոր մնալու յԵ պահեստում տվյալ բաց թողնումից հետո.

զ) փաստաթիվ երը ապահով կերպով պահպանիու վրա հսկողություն ունենալու նպատակով, պահանջագրի և-ի վերևում նշունակում են պահեստի հերթական և-ը: Ըստ յուրաքանչյուր նյութի անվան, տեսակի և չափի համարակալումն սկսվում է և 1-ից):

ե) ստացողին առաջարկում են ստորագրել նյութերն ստանալու մասին, նրանք ել ստորագրում են պահանջագրի ըուլոր յերեք որինակ-ները.

ը) բաց են թողնում նյութերը, վերադարձնելով ստացողին պահանջագրի մեկ որինակը (յերկրորդ որինակը—սպիտակ գույնի), իսկ յերկուար թողնում են իրենք սուս:

Այս գեալքում, լերը «տրանզիտային» նյութերը բաց են թողարկում գոչ թե նյութն ստացողի, այլ ուրիշների իրավասության տակ դառնվող աշխատանքների համար, սպառողները պահանջագիրը գրում են նույնպես չորս որինակից, բայց առ գեալքում արժատը փոխարինում և նյութի հետ միասին սպառողին վերադարձվելիք պահանջագրի որինակըն: Աւատի նյութերն ստանալիս, այդ նյութերը բաց թողնող անձին պետք է ներկայացնել պահանջագրի բոլոր 4 որինակը (օրոքուկը): Լրացնելով բոլոր չորս որինակների «փաստորեն բաց և խաղաղած» սցունակը, այն անձնագորությունը, վարի արամադրության տակ են գտնվում նյութերը, վերադարձնում են զրքույին արմատներով մեկ (ստորին) որինակը թողնում են իր մոտ, իսկ յերկուսը (վերինները) անձնում պահեստ:

Առանձին պահեստները նյութերով և աղբանքներով լրացնելը  
առարկում և ինչպես պահեստների վարիչների կամ պահեստավետ-  
ութերի նախաձեռնությամբ, այնպես և ձեռնարկության նյութական  
ժամանակակից նախաձեռնությամբ, նյութերի պահպանման վայրերի վարիչ-  
ութերը պարագագոր են և կերպով գործազրի իրենց պահեստներից նյու-  
թերի բաց թողնման բնդեատումներ չինեն. Այդ հսկողությունը կա-  
տարվում է հաշվառման քարտարկղի միջոցով վորը միշտ ցույց և տառ-  
և յուրաքանչյուր առանձին նյութի տոկալությունը պահեստում:  
յութերի բաժինը կամ նյութերի կենացրունական պահեստը, բացի  
ունեստները վերջիններիս պահանջով լրացնելուց, պահեստները լրա-  
ցնում են նաև նոր ստացված նյութերն ըստ պահեստների բաշխելու-  
արգով, նայած առ պահեստների տարրողությանը, բաց թողնելու ունա-  
ությանը և արտադրության պահպաններին:

Նյութերի կենտրոնական պահեստի պաշտրներից առանձին պահանջման նոր լրացնելու նորարարությունը հաջողակ է և առաջարկ է առանձին պահանջման համապատասխան վայրի վարիչը պահանջագրերը դուրս է գրությամբ միաժամանակ 5 որինակից (պատճենահան թղթով), վորի արմատը մնում է տեղում, իսկ 4 որինակը ներկայացվում է պահեստ:

Վերջինս, ձեակերպելով պահանջագիրը, լերկու որինակը թողնում  
և իր մոտ, իսկ յերկուսը նյութերի հետ միասին վերադարձնում ե  
պահանջ ներկայացնող պահեստին:

Նյութերը նյութական մասի կամ կենտրոնական պահեստի նախաձեռնությամ մի պահեստից մի աչլ պահեստ տեղափոխելիս, դրվում ե կարգադրություն միանգամբ (պատճենաթղթով) և որինակ. արմատը մասւ և փոխադրության կարգադրություն անողի մոտ, իսկ 5-ն ուզարկվում ե փոխադրությունը կատարող պահեստին: Նյութերը բաց թողնող պահեստը ձևակերպելով կարգադրությունը դրանից յերկու որնակը պահում ե իր մոտ, յերկուսը հանձնում ե նյութերն ընդունող պահեստին, իսկ մեկը վերադարձնում ե կարգադրիչին, վերաբերեցում կարգադրությունը կատարելու մասին (տես եջ 39):

Կարգադրությունները կազմվում են այսպես, ինչպես նյութերը բաց թողնելու պահանջագրերը, այսինքն՝ յուրաքանչյուր առարկայի համար առանձին և յուրաքանչյուր պահատի համար առանձին:

Նյութերն ընդունող պահեստի ստացած կարգադրության որի-  
նակները փոխարինում են ընդունման ակտերին՝ պահեստի վարիչը  
(կամ պահեստապետը) ստորագրում ե այն նյութերն ընդունելու  
մասին։ Նյութերը պահպանման մի տեղից մի այլ տեղ փոխադրելու-  
համար ուրիշ վոչ մի փաստաթուղթ չի կազմվում։

Պահանջագրերով պահեստից ստացված նյութերը մի պատվերից  
մի ուրշ պատվերի վրա տեղափոխելու անհրաժեշտության դեպքում,  
այդպիսի տեղափոխումը ձեսկերպվում և հատուկ ձեր հաղորդագիր  
կազմելով (աես հջ. 40):

Նյութերի փոխադրումը մատնանշված դեպքերում չի կարող կատարվել առանց հաղորդագիրը կազմելու, իբթե նույնիսկ կատարված լինի միենույն անձի պարտականությունների շրջանակներում:

Հաղորդագրերը վոր կազմվում են նույն կարգով, ինչ վոր պահանջագրերը (անհատական), գրվում են լեռկու որինակից (պատճենաթղթով), արմատը մնում է տեղափոխության կարգադրությունուն անողի մոտ, իսկ բնագիրը որ վա վերջին ուղարկվում և նյութական մաս Հաղորդագրերում անպայման ցուց և տրված ճշտորեն, թե նյութերը վորտեղից, ուր են տեղափոխված, նրանց անունը, տեսակը և չափը և քանակը:

<i>Առաջնական մասնակից</i>	<i>Պատրիարքական գույք</i>	<i>Առաջնական գույք</i>	<i>Առաջնական գույք</i>
<i>Պատրիարքական գույք</i>	<i>Պատրիարքական գույք</i>	<i>Պատրիարքական գույք</i>	<i>Պատրիարքական գույք</i>
<i>Պատրիարքական գույք</i>	<i>Պատրիարքական գույք</i>	<i>Պատրիարքական գույք</i>	<i>Պատրիարքական գույք</i>
<i>Պատրիարքական գույք</i>	<i>Պատրիարքական գույք</i>	<i>Պատրիարքական գույք</i>	<i>Պատրիարքական գույք</i>
<i>Պատրիարքական գույք</i>	<i>Պատրիարքական գույք</i>	<i>Պատրիարքական գույք</i>	<i>Պատրիարքական գույք</i>

Նյութի անդամական լրացի

Ի վերջու տանք մի քանի խորհուրդ փաստաթղթերը մոնտաժելու պերաբերակ:

— ա զոյ մի գեպքում չպետք և փաստաթղթի սեփական ձեւ հորիսել, առանց նախապես ծանոթանալու ուրիշ ձեռնարկություններում կամ հիմնարկներում կիրարվող նման ձևերի հետ, վորպեսզի չկրկնվի մի այլ տեղում արդեն կատարած սիսակները.

բ) վաստաթղթի մեջ մուծել վորքան կարելի յեւ քիչ սլունակ-ներ, վերջիններիս թիվը սահմանափակելով միտիացն անհրաժեշտներով և «պահեստի համար» յունակներ չթողնել կազմված ձևի մեջ վորքան քիչ են հաղցերը, այսօքան նա ամելի հաջող ե.

գ) փաստաթղթի սոլունակները դասավորել նրանց առավելագույն տրամաբանական հաղորդականությամբ, խորոր զրիֆտով զատելով այն ինչ վոր նախասոկզբնավես գլխավորն և հանդիսանում տվյալ փաստաթղթում մշակելու ժամանակի.

դ) չստեղծել փաստաթղթերի «սեփական» չափեր, հիշելով կառավարության գործումը թղթերի ստանդարտ չափերի, թղթի անտեսման անհրաժեշտության մասին և վերջապես այն մասին, զոր գործան փաստաթղթերն իր չափերով փոքր են, այնքան նաև ավելի հարմար են գործադրության համար:

ԵՐԵՄՈՆՔՅԱՆ ԽԱՐԳԵՐ

1. Ի՞նչ տեսակների կարելի յե բաժանել բոլոր փաստաթղթերը:
  2. Ի՞նչ են սկզբնական փաստաթղթերը և ինչով են նրանք տարվում կարդի փաստաթղթերից:
  3. Ի՞նչ են ամփոփման փաստաթղթերը.
  4. Զեր պրակտիկայում փաստաթղթերն ընտրեցեք ըստ իշենց ակների:

8-97. ፩-፻፻፻

ՀԱՅԿԱՑԻՆ ԳՐԱՆՑՈՒՄ

7-րդ թիմայում մենք խոսեցինք ձեռնարկության կամ հիմնարկության կողմից կատարվող տնտիսական գործառնությունները ձեռնարկության հաշվային փաստաթղթերի մասին:

Սակայն տնտեսական պրոցեսները հաջվի առնելու համար բարձական թէն միարն կազմակերպել այդ գործունելութիւնը ձեռակերպող ժամանակաշրջերը:

Անհրաժեշտ և վերջիններս հաշվալին գրքերում կամ քարտերում գորոշ կարգով դրի առնել (կամ ինչպես հաճախ ասում են գրանցել ցուցակագրել):

Հաշվարին փաստաթղթերի գրանցման տեխնիկական բոլոր ձեզերն իմի առած սովոր բար կոչվում ե հաշվային գրանցում, Վերջինիս մեթոդների քննության վրա ինչ մենք կանգնք կառնենք 8-րդ և 9-րդ թեսաներում,

Նախքան գրանցման ժամանակակից մեթոդների պատճենահանքարտային մեթոդի նկարագրությանն անցնելը, բոլոր հին մեթոդների համեմատությամբ նրա տուակելությունները մեզ համար ավելլավ պարզելու համար սկսենք մեր քննությունը հաշվառման առմաքային մեթոդի համառոտ նկարագրությունից:

Փաստաթղթերի գրանցումը մատյաններում (կամ քարտերում մինույն ե) կառող ե կատարվել կամ սեղմ, կարճ ձեռվ, այսպիս կոչված սինոպտիկ ձեռվ, կամ ընդհակառակը՝ մանրասան, — լրիվ սպառիչ ձեռվ, այսինքն՝ նկարագրական ձեռվով:

Գրանցման այս կամ այն ձերից եք կախված ե մոտյանների կամ քարտերի սյունակագրման ձեր:

Հետո հաշվային գրանցման նպատակը կարող ե լինել կամ հաշվի առնել տնտեսական պրոցեսների ամրող միագումարը մատյանների մի տեսակում, կամ թե չե՛ առանձին սիատեսակ շրջանարությունները հաշվի առնել առանձին մատյաններում:

Այստեղից եւ հաշվային մատյանների առաջին բաժանումը տալիս ե նրանց լերկու տեսակը՝ մատյաններ, վոր ձեռնարկվում են բոլոր անտեսական պրոցեսները հաշվի առնելու համար, — զրանք կոչվում են հիմնական մատյաններ և ապա մատյաններ, վորոնցով հաշվի յեն առնվում տնտեսական պրոցեսների առանձին տեսակները, — զրանք ել կոչվում են օժանդակ մատյանները վորովես բոլոր շրջանառությունների և բոլոր հաշիվներով հաշվառման միացում — այլ կոչվում են սինթետիկ (այսինքն՝ համագրական), ի տարրերումն օժանդակ մատյաններից, վորոնք տանում են ոպերացիաների առանձին տեսակների հաշվառումը և այդ պատճառով ել կոչվում են անալիտիկ մատյաններ: Պարզ ե, վոր հիմնական մատյաններում, վորտեղ տրվում են բոլոր հաշիվները, կարիք չկա և նախագոր չե գրել բոլոր մանրամասությունները. սրա նպատակն ե տալ միայն ընդհանուր պատկերը: Ուստի և նրանց մեջ սովորաբար զրանցումները կատարվում են սինոպտիկ ձեռվ: Ոժանդակ մատյանները պետք ե տարվեն նկարագրական ձեռվ. բացի զրանքից, հիմնական մատյաններով սովորաբար տարվում են կուեկտիվ հաշիվները իսկ օժանդակներով՝ մասնակի հաշիվները:

Ս.անից պարզ ե նաև հիմնական և օժանդակ մատյանների մեջ լիղած փոխնարարերությունները: Ոժանդակ մատյանները միայն հիմնական մատյանների մանրամասումն են հանդիսանում. նրանք զար-

գացնում են այս վեցիններիս տվյալները, վերածելով այն ավելի մանր հաշիվների և տալով յուրաքանչյուր հաշվի մանրամասն տեսությունը: Այստեղից ել բդիում ե, վոր այս ամենը, ինչ սեղմ ձեռվ տրվում ե հիմնական մատյաններում, նույնը, բայց արդեն մանրամասնություններով կրկնվում և օժանդակ մատյաններում: Այստեղից ել հիմնական մատյաններն այլ կերպ կոչվում են առաջին կարգի, իսկ օժանդակ մատյանները՝ լերկորդ կարգի մատյաններ:

Մատյանների թե մեկ և թե մյուս տեսակն իր հերթին կարող ե ըստ մասնակի նայած թե նրանց մեջ գրանցման ինչ կարգ ե ընդունված: Ամենից առաջ հաշվային գրանցումները կա, ելի յե կատարել ժամանակագրական նկարագրական գրանցումների ձեռվով, ասսինքն՝ գործառնոթյունները կատարելու կարգով: Այնուհետև ժամանակագրական գրանցումները կարենի յե սիստեմի յինթարկելը ըստ առանձին հաշիվների: Մեր ասածները պարզաբանելու համար կաղմենք մի փոքրիկ աղյուսակ, վորտեղ մենք կունենանք հետեւայ սյունակները. 1) ամսվա համար, 2) բարգի համար, 3) գործառնոթյունները զրանցելու, 4 և 5) յրջանառությունների գումարների համար և հետագա սունակները՝ առանձին հաշիվները գիրետագրելու և կրեպիտագրելու համար կատարենք փոքրիկ զրանցումներ:

Ա.մ.	Բ.	Շրջանառության գրանցում	Շրջանառության գրանցումները				Հ-իվ դրա- մարկղի				Հ-իվ հաջ.  Առ.հաշվի հաշ. գ.բան գումարն.			
			Բ.	Կ.	Բ.	Կ.	Դ.	Կ.	Ե.	Կ.	Գ.	Հ.	Դ.	Կ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11				
սեղմ.	1	Սասացված ե № 011580 չեկով № 01561 և Տված ե առնա- շվի գործակալ Պետրովին	500	—	900	—	900	—	—	900	—	—	—	—

Այս աղյուսակում մենք տեսնում ենք յերկու տեսակ զրանցումներին հինգ սյունակները հատկացված են գործառնոթյունները ժամանակագրական կարգով նկարագրելու համար, այսինքն՝ գործառնոթյունների կատարած ժամանակի կարգով: Հետեւյալ սյունակներում ժամանակագրական զրանցումները սիստեմի յեն վերածվում են աղյուսակի մատյաններով: Հաշիվներով բացի այստեղ լերկու տեսակի գրանցումները միացված են յերարի թերեւարերը և արդեն մատյանների մատյանները: Այստեղ օժանդակ մատյանների գրանցումների մատյանները կատարվում են սիստեմատիկ կարգով կազմել գրանցումները կարգելի յե պարբերաբար հաշվել և այդպիսով կազմել զրանցումները:

Քաղաք շրջանառությունների ամփոփումը ինչպես, ըստ առանձին հաշվների, այնպես ել ըստ նըանց ամբողջ միագումարի (լրջանառության աեղեկազրերի):

Բոլոր գործառնությունների նկարագրական ձևով ժամանակա-  
պրական գրանցման համար հիմնական մատյան և հանդիսանում  
այսպես կոչված որագիրը: Որագրում գրանցումները կատարվում են  
եջերով և միակողմանի սխոտեմով, ըստ փորում մատյանի եջերը նա-  
խորոք պետք է համարակալված լինեն, թերթի սյունակավորու-  
մը — սովորական գրասենյակալինն է: Յուրաքանչյուր գործառնու-  
թյան համար մատյանում կազմվում է այսպես կոչված որագրա-  
կան հոդված: Յուրաքանչյուր հոդված պետք է իր մեջ պարունակի  
իր պարտադիր հետևյալ բաղկացուցիչ մասերը. 1) գործառնությունը  
կատարվելու ժամանակը կամ, ուրիշ խոսքով, հոդվածի դատան, թվա-  
կանը, 2) հոդվածի հերթական և թ. 3) այսպես կոչված հոդվածի վեր-  
նագիրը, այսինքն՝ նշանակումն այն հաշվի, վորը պետք է կրեդիտա-  
գութիրը, 4) գործառնության նկարագրությունը և 5) գործառնության  
գումարը:

Որագրական հոդվածներ կազմելու ձեր պատկերացնենք որինակություն՝ Գործառնություն՝ 1931 թ. սեպտեմբերի մեկին պետքանկի № 011560 չեկով դրամարկղում տարացի և 500 ա:

Հողածելը (ընգունեաք այս վորպես առաջինը) կունենա հետեւալ տեսքը:

U.S. SURVEY 1931 P.

1	Դիմում	Կրեպքա
Դ-ա զըստաբկղ Կ-ա Հաջիվ. հաջիվ. պետքանկում Ստացված և տնտեսական ծախքերի համար Տ 011580 շեկով...	500	500

Այստեղ մենք տեսնում ենք, ալպես կոչված պարզ հոդվածի սրինակը, վորի մեջ մեկ հաշիվ գերետագրվում է և մեկը՝ կրեդիտագրվում: Բայց մենք գիտենք, վոր կարող է լինեն և ուս, դ գործառնություններ, իերբ մել հաշիվ գերետագրելիս միաժամանակ մի քանի հաշիվներ կրեդիտագրվում են: Կամ մեկ հաշիվ կրեդիտագրելիս միաժամանակ մի քանի հաշիվներ գերետագրվում են:

Այդ դեպքում հնարավոր և կազմն այսպես կոչված բարդ հոգ-  
մածներ:

Բարդ հողվածի որինակ՝

Համաձայն տնսես ի. Պ. Ալեքսուկի ներկայացրած ազանութիւն  
հաշվետվության նա գնարել ե.

**Գրասենյակույին կահճարասիք գննելու համար** . . . . . ₾. 500  
**Սպասարկող կազմուն ածխատավիարձ** . . . . . ₾. — 150 — 650

Մատյանուս կազմվում ե հետեւյալ հոդվածը (գրանցման ձևն ու պատճենի բաց ե թողովում)։

	Դերդու	Արեգիս
2. Դ-ա տնտեսական ինվենտար		
Գնիած դրասենյակային կարասակույքներ	500	
Դ-ա բանվորներ և ծառայողներ		
վճարժած և աշխատավարձ	150	
Կ-ա Առհաջող դումաբներ		350
Տառեա-Սիդորովին		

Յերբեմն «Դ առ» «Կ-առ» բառերի վորսալեն դրվագն և օհացչիկը բառը, որինակ.

Հաշիվ Դրամաբեկներ

Հաշին Հաշվարկային. հաշվել Գետըսնկառ

Սովորաբար որպագրական հողվածների համարակալուսը տարփում  
և տարվա սկզբից մինչև գերջը և շրջանառության ընդհանութը գումարու  
ները հաշվում են արթողջ ժամանակվա համար:

Դրա համար յուրաքանչյուր եջի գրանցումն ըլլ զերջանարաց հետաքերջին տողում դրված և առանցորած կամ պարփակում, զորուել և արգում և նախորդող գրանցումների ընդհանուր գումարը. հինգ նույն ընդհանուր գումարը դրվում և հետևալ եջի առաջին տաղի գրա (կարելի յեւ վերջացող եջի ներքեւում գնել միայն այդ եջի հողվածների ընդհանուր գումարը, իսկ նոր եջում՝ բայց հողվածների ընդհանուր գումարը, հաշված սկզբից). Վերպեսդի, նախ, չծանրաբեռնվի ամբողջ տարվա շրջանառությունների ընդհանուր գումարներով և յուս կողմից, տարվա ընդհանուր գումարի հետ միասին տեսնել ամսական շրջանառությունները, —կարելի լի է առանձին փոխանցումները տաք, դուրս քերելով նաև յերեսների ընդհանուր գումարն ամսե ամիս, և հետո՝ հետաքառամբ ամիսները վերջանաւոց հետո ընթացիկ ամսվա ընդհանրադառմարին ավելացնել նախորդ ամիսների ընդհանրագումարները: Յեթե որինակ, հոկտեմբերին որազրական հողվածների ընդհանրագումարն եր ո. 615, 825, 50 կ. իսկ նոյեմբերին ո. 714, 185, ապա նոյեմբերի մեջին հողվածից հետո գրում են այսպիս.

Հեղամենը . . . .	714.185—
Առ 1/Խ Եկել ե . . . .	615.825—50
Հանրագումար . . . .	1.330.010—59

714.185—
615.825—50
1.330.010—59

Այսպիսով տարվա վերջին ավելացնելով նախորդ ընդհանուր գումարները, մենք կստանանք շրջանառությունների տարեկան ընդհանրագումարը:

Այսպիսով որագրում (մատյանում) ժամանակագրական կարգով հոդվածներ են կազմվում տնտեսության մեջ կատարվող վոչ բոլոր գործառնությունների մասին: Ենթակա որագիրը (մատյանը) բաժանվում է երկու առանձին գրքերի առաջին գիրքը դրամական գործառնությունները գրանցելու համար, այսինքն՝ ստացած և վճառած կանխիք դրամները, իսկ երկրորդը՝ մասցած բոլորի, այսինքն՝ անդրամ կամ, ինչպես վոր առում են, «մեմորիալ» շրջանառությունների համար: Առաջին գիրքը կոչվում է դրամարկղային որագիր (կամ որագրական դրամարկղ), իսկ յերկրորդը մեմորիալ:

Մեմորիալը տառացիորեն գրվում է այսպես, ինչպես որագիրը, այսինքն՝ այստեղ ես կազմվում են մեմորիալ հոդվածներ և որագրից տարբերվում են նրանով, վոր որագրում հոդվածներ են կազմվում բայց գործառնությունների համար, իսկ մեմորիալում միայն անդրամալին (այսպես կոչված արտադրամարկղային) գործառնությունների մասին:

Դրամարկղային որագիրը տարվում է յերկողմանի ձևով, այսինքն՝ դրամարկղի հաշվիների և գերետով և կրիզտով:

Դրամարկղի հաշվի գերետով ցույց է տրվում, թե յուրաքանչօւր գործառնության վոր հաշիվը պետք է կրիզտագրել, իսկ կրիզտավում՝ վոր հաշիվը պետք է գերետադրել: Պարզաբաննենք դրամարկղային որագրի դրանցումները հետեւյալ գործառնություններով: առ 1/1 1932 թ. դրամարկղում կարու 1.500, նույն որը չեկով ստացված է, ու 1.000, ստացված է զնորդներից վաճառված ապրանքների համար ու 500 և վճարված է աշխատավարձունքունք 800: Դրամարկղային մատյանը հունվարի 1-ին հետեւյալ տեսքը կունենա:

ՀՈՒՆՎԱՐ. ՀԱՇԻՎ. ԴՐԱՄԱՐԿՂԻ 1932 թ.

ԿԵՐՏԸ

1	Մատյանը առ 1 թիվը կամ հաշվարկ հաշիվը Գերաններում չեկով Կ-ա. պատրաստի ար- տադրունքի բրացում ստացված է,	1.500	1	Դառնավորների հ ծառայողների, աշ- խատավարձ . . .	800	800	ԿԲԵՐԸ
	1000 — 500 1500		1				

Այսպիսով որագիրը կամ Մեմորիալը դրամարկղի հետ միասին ժամանակագրական կարգով արձանադրում է տնտեսության մեջ կառարկիող բոլոր գործառնությունները, ինթարկելով նրանց հաշվարկն մշակման, այսինքն՝ թե յուրաքանչչուր գործառնությունը վար համեմետ:

Հիմնական գրքերի սիստեմում ժամանակագրական գրանցումը նախապատճենական գրանցում եւ Այստեղ թեև բոլոր շրջանառությունները սիստեմի յին վերածվում, այսինքն՝ ցույց է տրվում, թե վոր հաշիվների մեջ պետք է գրանցվեն, բայց միայն ժամանակագրական կամ սիստեմի վերածվումը: Աւտի միայն այդպիսի գրանցումով հասրավոր չե ամեն մի մոմենտում, առանց հատուկ քաղաքացների, վորոշել ձևունարկության տնտեսական աշխատանքի վիճակը, ինչպես ամրողությամբ, անպես ել առանձին մասերով: Ինչպես մենք դիտենք շրջանառությունների ցուցակագրումը պետք է կատարվի գրանցելով ըստ առանձին աղյուսակի-հաշիվների: Հենց մարտ մատյանն ել հանդիսանում է բոլոր այդպիսի առանձին հաշիվների հանրագումարը: Նրա մեջ, ինչպես և որագրում, գրանցվում են բոլոր շրջանառությունները, բայց սիստեմի վերածելով, այսինքն՝ բաժանելով նրանց առանձին ինթայսայնսկների՝ հաշիվների: Սրանից պարզ է, վոր Մայր մատյանը կարող է հասրավորություն տալ տեսնելու անտեսության բոլոր առանձին մասերի վիճակը, ուրիշն և նրա ամբողջին:

Մայր մատյանի ձեւը սովորական մատյանի ձեւ է գրանցենակային գծվածքով: Մատյանի սկզբում կամ վերջում անհրաժեշտ է առնենալ այրութեն, վորակ համապատասխան տառելորի տակ անօթիչապես գըրվում է յուրաքանչչուր նոր բացած ճաշիվը, ցույց տալով թե մատյանի վոր հջումն և նա գտնվում (մայր մատյանի, ինչպես և մյուս բոլոր գրանցենակային մատյանների եջերը համարակալվում են մատյանը բացելիս):

Յուրաքանչչուր հաշվին հատկացվում է մեկ յերկողմանի եջից վոչ պակաս, ըստ վորում յերկու եջերի համարակալումն ել միատեսակ է (1—1, 2—2, 3—3 և այլն): Թերթի վերեռում, մեջտեղում խոչը տառերում կրվում է հաշվի անունը, հաշվի ճախ կողմում՝ կրեթ, իսկ աջ կողմում՝ կրեթիս: Այդ ժամանակ Մայր մատյանի ձեւը կլինի պատճեն (վորպես որինակ վերցնենք դրամարկղի հաշիվը):

ԿԵՐԸ	ՀԱՇԻՎ. ԴՐԱՄԱՐԿՂԻ	ԿԲԵՐԸ									
1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6

Առաջին սյունակը հտակացվում է զրանցման ամենը ցուց տալու համար. յերկրորդը՝ որը, չերքորդը՝ մատյանի հոգիածի հերթական և ըստ վրա զրանցումը կատարվում է չորրորդը՝ դերետում ավագը գործառնությունից վեր հաշիվ և կրիդիտագրվում, իսկ կրեդիտում՝ վեր հաշիվ և զերետագրվում. հինգերորդ և վեցերորդ պունակում՝ գործառնությունից համար են: Հինգերորդում, աչմբնքն մատյանի ամեն որ և տարվում, հարմար և, վար գրին զերետագրման և կրեդիտագրման առանձին գործառները իսկ վեցերորդում, աչմբնքն ընդհանուր սյունակում դուրս բերվեն նրանց ամենամայա ընդհանուր գործառնը (ինթե Մայր մատյանը տարվում է ամսե ամսի ամսվա ընդհանուր մատյանի սյունակում; իսկ տարեկանը՝ ընդհանուր սյունակում):

Ինչպես որագրում, այնպես ել Մայր մատյանում կատարվում են փոխանցումներ այսինքն՝ գործառների ընդհանրագումաբները փոխանցվում են մի եջեց մուս եջը, բայց, ինարկե միայն ըստ յուրաքանչյուր առանձին հաշիվ և ըստ նրա յուրաքանչյուր կողմի: Մայր մատյանի հաշիվներում զրանցումները պետք է չանցնեն նախավերջին տողից, զորպեսդի անպայման վերջին տողում լինի փոխանցումը: Բայց քանի վոր Մայր մատյանը լերկիզմանի լի տարվում, առաջ, թեկուղ վերջացած լինի հաշիվ մի կողմը, փոխանցումը միաժամանակ լերկու կողմերումն ել զրվում է, իսկ քիչ զրված կողմի վրայի աղատ տեղը մինչև վերջին տողը գծվում և բեկալ զծով:

Մայր մատյանը տարվում է որագրական հոգվածների կամ մեմորիալ որդերների հիման վրա, և զրանցումների մայր մատյան փոխանցելը կոչվում է տարածում Մայր մատյանի: Մայր մատյանում տարածելը շատ ողարդ աշխատանք է, զորովներն որագրում (կամ որգերում) արդին ցուց և որդիած, թե վոր հաշվները պետք է զերետագրել և վորը՝ կրեդիտագրել:

Վերցնենք մի որինակ.

Դեբետ զրամարկղի, կրեդիտ՝ հաշվարկային հաշիվ պետրանկում ու. 2000.—.

Մայր մատյանում. (լինթագրենք 5-րդ եջում) բաց ենք անում հաշիվ դրամարկղի և զերետում զրում ենք ու. 2.000, մատնանշելով թե այդ ժամանակ վեր հաշիվ և կրեդիտագրվում: Հետո բաց ենք անում հաշիվ հաշվարկային հաշիվ պետրանկում (լինթագրենք 8-րդ եջում) և այնուղ կրեդիտում զրում ենք ու. 2.000, ցուց տալով, թե այդ ժամանակ վեր հաշիվ և զերետագրվում: Մայր մատյանի հաշիվներով զրանցումները կատանան հետևակ ձեր:

ՀԱՇԻՎ ԴՐԱՄԱՐԿՂԻ				
ԳԵՐԵԱ				ԶՐԾԻՑ
ՀՈՒՆԳՎԱՐ	7	1	ԿՐԵ-ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԱՆ ՎԵ- ՉԱԿՐՎԱՆԿՈՒՄ	2000
ՀԱՇԻՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻ ՀԱՇՎԻ ՊԵՏՐԱՆԿՈՒՄ				
ՀՈՒՆԳՎԱՐ	7	1	ԿՐԵ-ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԱՆ ՎԵ- ՉԱԿՐՎԱՆԿՈՒՄ	2000

Որագիրն ու Մայր մատյանը լերեան կարելի լի միացներ Այդ դեպքում կստացի մի մատյան, վոր սովորաբար «Որագիր—Մ. Մատյան» անունն ե կըռում: Նրա ձեր մենք մեջ ենք բերել այս թեմակի սկզբում:

Այժմ անցնենք ոժանդակ մատյաններին: Յուրաքանչյուր ոժանդակ մատյանի նպատակն ե գրանցել միայն տնտեսական արողեանների վորեան մի տեսակը կամ ակտիվի առանձին մասը, որինակ՝ դրամարկղի, ապրանքների, գերիտորների և այլն, կամ պաստիվի առանձին մասը, որինակ՝ կրեդիտորների և այլն:

Բոլոր այդպիսի ոժանդակ զբերը կլինեն հաշվարկին բնույթի գրքեր: Բայց բացի զրանից կարող են լինեն նաև տեղեկատու թնուվիթ կրող ոժանդակ մատյաններ: Նրանցով վոչ մի հաշվառում չի կատարվում, զրանցվում են միայն տեղեկատու տվյալներ: Բոլոր այդպիսի գրքերն ալլ կերպ կոչվում են արտասիտեամատյաններ, վորովիետե նրանց գրանցումները հաշվառման ընդհանուր սիստեմի մեջ չեն մըտնում: Հետագայում սենք կխոսենք միայն բացառապես հաշվարկին մատյանների մասին: Յեթե արդ մատյանները քննելու լինենք զրանցումների բնույթի տեսակներից, ապա նրանք կարող են լինել ֆաւանակագրական զրանցումների մատյաններ և սիստեմատիկ զրանցումների մատյաններ:

Հիմնական մատյաններին զրովընթաց հաշվարկին բնույթի ոժանդակ մատյաններ տանելու կարիքը, նախ, ըլլիում ե գործնական անհարաժեշտությունից: Մայր մատյանը, վորտեղ սիստեմատիկ հաշվառում ե կատարվում, պետք և լինի միայն սենապատիկ ձեռվ, և տա, շրջանառությունների պատկերն ըստ առանձին հաշիվների: Մինչդեռ հաշվառման լրիվությունը վոչ միայն զրամարկան, այլ և քանակական հաշվառման անհարաժեշտությունը պարտավորեցնում է կատա-

բել յուրաքանչյուր հաշվի համար նկարագրական ձևով մանրամասն գրանցումները ինարկե, բոլոր մանրամասնությունները կարելի յեր զբել նաև Մալր մատյանում, բայց այն ժամանակ այդ վերջինը ծավալով այնքան կարճ եր, վոր նրա մեջ գրանցումներ կատարելը մի մարդու համար անհնար կլիներ, Անհրաժեղաւթյունն ստիպում ե գրանցումներ կատարելու աշխատանքը բաժանել մի քանի մարդու մեջ, Դա իրագործվում ե բոլոր անհրաժեղաւ մանրամասնություններով օժանդակ մատյաններ տաճնելով: Ծիշտ ե, այդ մանրամասնությունները կարելի չե գտնել նաև ամենորյա որագրում, սակայն այնտեղ նրանք սիստեմատիկ ձևով չեն դրված, և տեղեկանքների համար որագրից սկտվելը կպահանջեր միանման շրջանառությունների քաղվածքներ կատարելու համար հսկայական մանրակրկիտ աշխատանք:

Այսպիսով, օժանդակ մատյանները հնարավորություն են տալիս Մալր մատյանը տաճել սինոպտիկ ձեռով, Բացի նրանից, օժանդակ մատյանները լայն հնարավորություն են տալիս նրանց մեջ պահելու մասնակի կամ տեսակային հաշիվներ, ըստ վորում Մալր մատյանում տարբում են միան կոլեկտիվ հաշիվներ: Հետեւարար օժանդակ մատյաններ տաճելը հեշտացնում և պարզեցնում ե Մալր մատյանը տաճելու գործը:

Հաշվային մատյանների (օժանդակների) մալր մատյանի նկատմամբ քննությունից յերեսում ե, վոր բոլոր այն գրանցումները, վոր կատարվում են Մալր մատյանում, անզայման պետք ե ընկնեն նաև համապատասխան օժանդակ մատյանի մեջ և անզայման նույն կողմում ինչ վոր Մալր մատյանում: Հետևարար Մալր մատյանում մի վորեն հաշվով դեբետագրման և կրեդիտագրման հանրագումարները պետք ե հավասար լինեն համապատասխան օժանդակ մատյանի նույնպիսի հանրագումարներին: Որինակ՝ այն բոլորը, ինչ վոր մենք գրում ենք ապրանքների կոլեկտիվ հաշվում, նույնը և նույն կողմում մենք պետք ե գրենք նաև անձնական հաշիվների օժանդակ մատյանի վորեն և տեսակային հաշվում:

Պարբերաբար, սովորաբար ամսական միանգամից վոչ պակաս կատարվում ե բոլոր գրանցումների ամփոփումն, ամենից առաջ զիստվոր սատլանից, այսինքն՝ հաշվում են յուրաքանչյուր հաշվի զերեւության և կրեդիտագրման հանրագումարները և դուրս բերվում նրանց սալլունները: Այդպիսի ամփոփումն են հանդիսանում շրջանառության տեղեկագրերը կամ ստուգիչ բարանները:

Պարբերական շրջանառության տեղեկագրեր կաղմելու նպատակն ե, բացի գրանցումների ասփոփումից և հաշիվների գրությունը վորաշելուց, գրանցումների ստուգում կատարելը: Ցատության առաջին նըշանը (լինի դեբետի և կրեդիտի ընդհանրագումարների հավասար

նելը: Բայց հեղառությամբ կարող ե պատահել, զոր մենք Մալր մատյան անցկացնելիս թեև դերետում և կրեդիտում հավասար գումարներ ենք դրել, բայց սիսալ գումար ենք դրել, կամ հողվածը Մալր մատյան բոլորովին չենք փոխանցել. բալանսը կրունի, բայց բնդկանուը գումարները հավասար չեն լինի որագրական հողվածների բնդկանը մարմարին: Ալստեղից յերեսում ե, վոր ճշտության յերկրորդ նշանը կլինի թե գերեսի և թե կրեդիտի հանրագումարների հավասարությունը որագրական հողվածների հանրագումարին: Բայց սա լիլ դեռ ևս ցուց չի տա, թե գրանցումներն անպայման ճիշտ են: Ստուգիչ բալանսը ցույց կտա միայն ձեական ճշտությունը, այսինքն թե որագրական յուրաքանչյուր հողված դրված ե Մալր մատյանի և դերետում և կրեդիտում:

Ծանոթանալով մատյանների և նրանց տեսակների այդ հիմնական հասկացողություններին, անցնենք հաշվառման ձեռների քննությանը (ըստ վորում ձև ասելով պիտօք և հասկանալ հաշվային գրանցումների վորոց տեխնիկական պրիմիների միագումարը):

Հաշվառման դարձացման պատմությունը մինչև մեր որերը ցույց ե տալիս հաշվառման տեխնիկայի անընդհատ աճումը նրա դարձացումը:

Առեւրական կապիտալի դարձացման դարձրջանի կապիտալիստական տնտեսական ձեռնարկությունները զեստ թուլ ենին: Նրանց գործառնությունները բարդ չեյին և քիչ եյին:

Ծնտեսության համար բավական եր հաշվապահության «իտալական» ձեր (այդ ձևը կոչվում է «Հին» իտալական, տարբերելու համար «Հնուց» վորոն ավելի ուշ և առաջացել):

Հին իտալական ձեր հանձնարարացում ե ուսենալ ամենորյա Մալր մատյան, վորի մեջ բացված են վոչ թե կոլեկտիվ (բայանսային) հաշիվներ, այլ մասնակի հաշիվներ: Այդ հաշիվներով ել կատարվում ե լուրաքանչչուր գործառնության գրանցումը: Վոչ մի օժանդակ մատյան չի տարբում:

Պարզ ե, վոր այդ ձևը կարող ե կիրառվել միան բոլորովին չղարգացած գործառնություններ ունեցող մասը տնտեսության մեջ:

Հենց վոր կապիտալիստական տնտեսությունն սկսեց աճել, գործառնություններն ավելի բարդացան և նրանց թիվը մեծացավ, տնտեսության այդ ձեսփոխության համապատասխան հաշվապահությունն ել փոխում ե իր տեխնիկան, մացնելով կոլեկտիվ բալանսային հաշիվներ, մացնելով ժամանակագրական (որագիր) և սիստեմատիկ (Մալր մատյան) գրանցումներ հասկացողությունը, թողնելով Մալր մատյանի համար միան կոլեկտիվ հաշիվները, իսկ լուրաքանչչուր հաշվի բոլոր մանրամասնությունները տեղափոխելով օժանդակ մատյանները:

Այսպիսով առաջ ե գայիս «նոր իտալական ձեր», վոր բնորոշ ե

Նրանով, վոր յուրաքանչյուր առանձին գործառնության ժամանակաշղթական զրահան զրանցումը կատարվում է ամեն որ հատուկ որագրում և առան որ ել անց և կացվում Մայր մատյան:

Նույն այդ ժամանականը պիտի վերագրել նաև «ամերիկյան» ձեր ծագումը. նրա մեջ արդեն զգացվում է նոր իտալական ձեր ռացիոնալացման առաջին փորձը:

Ամերիկյան ձեր միացնում է որագրի ժամանակադրական զրանցումը Մայր մատյանի սիստեմատիկ զրանցման հետ, վորով և ստացվում է մի մատյան «Ուրագիր Մայր մատյան», Այդպիսի Մայր մատյանի ձեր ցուց և տրված թեմանի սկզբում: Այս ձեռվ որագրի պահելը չի պահանջում հոդվածների վարնագրեր կազմի, աւտինը՝ չի պահանջում մատնանշել գերեստագրվող և կրեդիտագրվող հաշիվները, քանի վոր հաշրվերով անցկացնելը կատարվում է հենց այստեղ: Յուրաքանչյուր եջի վերջում տրվում է շրջանառության գումարների ընդհանուր գումարը և յուրաքանչյուր առանձին հաշվի գերեստի և կրեդիտի ընդհանուր գումարները, և բոլոր այդ ընդհանուր գումարները փոխանցվում են հետեւալ եջը. Վորովհետև դերեստի և կրեդիտի ընդհանուր գումարները պետք է իրար հավասար լինեն և նրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած հավասար և շրջանառությունների ընդհանուր գումարին, ուստի յուրաքանչյուր փոխանցման (տրամադրութիւն) ժամանակ կարծես թե կազմվում է շրջանառության տեղեկագիրը: Այսպիսով որագրի Մայր մատյանը եյտես ժամանակադրական, սիստեմատիկ և ամփոփման զրանցումների միացումն է մի մատյանում:

Ամերիկյան ձեն այն հարմարությունն ունի, վոր նրա յուրաքանչյուր փոխանցման մեջ կան բոլոր հաշիվներից պատրաստի դրաշնառությունները և, այդ բոլոր հաշիվները համարված են սի տեղ: Իսկ նրա անհարմարությունն այն է, վոր նա կարող է գործադրվել միայն փոքր տնտես և բիզնեսներում, վորտեղ մեծ թվով հաշիվներ չեն պահվում: Վերջին անհարմարությունը վերացվում է նրանով, վոր այդ ձեռվ բաց են արվում ըստ կարելվույն շատ թվով կոլեկտիվ հաշիվներ, վորպեսզի մասնակի հաշիվների համար կարելի լինի ունենալ մեծ թվով ոժանդակ մատյաններ: Եերբեմն հաշիվների թիվն ավելացնելու համար որագրի Մայր մատյանում ունենում են կամ մեկ սյունակում յերկու հաշիվ, գրելով մեկ հաշիվին վերաբերվող գումարները սև թանաքով, իսկ մյուսին՝ կարծիր, կամ յուրաքանչյուր հաշվի համար ունենալով մեկական սյունակ, գրեթետագրվող և կրեդիտագրվող գումարները գրում են այդ սյունակում տարբեր գույնի թանաքով:

Զայտեծ սկզբունքորեն արդեն ուցիոնալացրած ալիք ձեռ նկատումը ձեռք առնվող ուցիոնալիզատորական բոլոր սիջոցառումներին,

ալիք ձեր կարող ե գոյություն ունենալ միայն գործառնությունների պարզ շրջանակ ունեցող անտեսության մեջ, վորը ձգտում է վոչ թե լրիվ հաշվառման, ալլ ձգտում է հաշվառման միջոցով շահությը քողարկելուն: Կապիտալիստի համար կարեղ չեր ունենալ իր ըուոր գործառնությունների լրիվ և ճիշտ հաշվառումը՝ նրանք բնդիչակառակը պետք է թագցրված լինելին հարկություն: Բայց և այնպես նոր շուկաներ, գաղություններ գրավելուց հետո կապիտալիստական տնտեսությունների գործառնություններն ավելի բազմանում են, հաշվարին գրանցումների քանակը քանի գնում մեծանում է և մի մարդու համար ավելի ու ավելի գերար և դառնում մի մատյանում տանել ժամանակագրական գրանցումները:

Անհրաժեշտ է դառնում ժամանակագրական գրանցման (որագրի) աշխատանքը բաժանել մի քանի աշխատողների միջև: Այսպես, ոկրղքում առաջ և գալիս գերմանական ձեր, վորի ժամանակ ամենուրյագրանցումները կատարվում են զրամարկղային որագրում և Մեմորիալում: Ամիսը լրանալուց հետո դրամորկղային որագրից և Մեմորիալից քաղվածքների միջոցով կազմվում է ամփոփման ամսական որագրեր վորից դրանցումներն ընդհանուր գումարներով փոխանցվում են Մայր մատյանը:

Գոյություն ունի ամսական ամփոփման որագրեր կազմելու Մայր մատյան պահելու միքանի յեղանակ: Մենք այստեղ կմատնանը նշենք մի յեղանակը:

Պահվում են հատուկ ամսական տեսրեր, վոր յուրաքանչյուր հաշվի համար ունի առանձին եջ, վորտեղ մի կողմից ցուց են արվում թղթակցող հաշիվները, իսկ մյուս կողմից՝ ամսաթվերը: Ըսթացիկ աշխատանքի պրոցեսում այստեղ տրվում են թղթակցող հաշիվներով գերեստագրման և կրեդիտագրման ընդհանուր գումարները և այդպիսով ամփոփման ամսական մատյանի կազմելը չի հետաձգվում ամսվավերջին, ալլ նախապատրաստվում է որեցոր:

Այդպիսի ամփոփման որագրի, ձե կարող ե լինել հետեւալը (տես հջ 54 վերեխնը):

Թղթակցող հաշիվների և ամսաթվի ուղղությունը կարելի չեն փոխել, այսինքն հորիզոնական գծերով տալ ամսաթվերը, իսկ ուղղահայններով՝ թղթակցող հաշիվները: Ամիսը լրանալուց հետո հաշվում են ընդհանրագումարները, վոր առանձին են ստացվում թե թղթակցող հաշիվների, թե գերեստի և թե կեղծիտի համար:

Այսպիսի ամփոփման որագրիրը, իրականում, փոխարինում է Մայր մատյանին, և վերջինս կարող եր չտարգիր: Բայց այն տանելու անհրաժեշտությունը, և այն ել ամենասեղմ ձեռվ, բոլորում և միայն նրանից, վոր այդ տեսրերում կան միայն գրանցումները ըստ ամիս-

ների և վոչ թե ամբողջ տարվա համար։ Մայր մատյանը կարող է ունենալ եջ 54-ում ցույց տված ձևը։

Կիսամյա բալանսներ կազմելու գործը հեշտացնելու համար ըստ ամիսների ընդհանում գումարները կարելի լե տալ յերեք անգամ՝ առաջին կիսամյակի ընդհանուր գումարը, յերկրորդ կիսամյակինը և ամբողջ տարվա հանրագումարը։

### ՀԱՇԻՎ

ԴՐԵՆԱ

ԿՐԵԳԻՄ

ՀԱՇԻՎ	1	2	հ այլն մընչ 31-ը	Ընդամենը ամսում	ՀԱՇԻՎ	1	2	հ այլն մընչ 31-ը	Ընդամենը ամսում

### ՀԱՇԻՎ

ԴՐԵՆԱ

ԿՐԵԳԻՄ

ՀԱՇԻՎ	ՀԱՇԻՎ	հ այլն մընչ համա- մեռու առա- գա վերջ	Ընդամենը	ՀԱՇԻՎ	ՀԱՇԻՎ	ՓԻՄԱՎԱՐ	ՓԻՄԱՎԱՐ	հ այլն մընչ համա- մեռու առա- գա վերջը	Ընդամենը

Հետո յերեսն և գալիս ֆրանսիական ձեր, վորը մեկ մեմորիալի փոխարեն պահում ե մի քանի որագիր (5-6 ըստ գործառությունների խմբերի, որինակ՝ մերումների որագիր, վաճառքի որարագիր, ոռահաշիվ գումարների որագիր և այլն)։ Ինչպես գերմանական

ձեռնութ, այնպես ել այստեղ տարվում ե իմբրագործան որագիր, վարից և կաղմանում ե Մայր մատյանը։ Ոժանդակ մատյանները տարվում են նույն սովորական կարգով, ինչպես մնացած բ լոր ձեռնութ։

Յեթե հին իտալական ձևում մենք ունենք 2 արտագրություն՝ մի հաշվի դեբետում և մուտքի կրեդիտում, ապա մատյանալին մեթոդի ժամանակակից, ավելի կատարելագործված ձևում մենք արդեն ունենք 5-6 արտագրում՝ միմուիալ որդեր, որագիր, ոժանդակ մատյաններ դեբետի և կրեդիտի համար և այլն։

Այդ արտագրությունների անհրաժեշտությունը բարդացրել ե աշխատանքը, մեծացրել ե հաշվային կազմի աշխատանքը և ստեղծել ե ծանրացարժ հաշվային ապարատ։ Վորքան շատ են արտագրությունները, բնական ե, վոր այնքան ել շատ կլինեն սխալները, վորոնք հայտնաբերելու համար պետք ե ծախուել աշխատանքային յերկար ժամեր և որեր և միևնույն ժամանակ ել վատահ չլինեթ թի կատարված աշխատանքը ճիշտ ե և անսխալ։

Հաշվառման նոր ձեռնոր գերաբերվող մասնագիտական գրականության մեջ բազմից նշվել ե հաշվառման մատյանների մեթոդի մի շարք եյտան թերություններ։

Եյտան թերություն և մատյանների մեծածավալությունը, վորոնք տեղից տեղ տեղափոխելու համար հաշվային աշխատաղներն ստիպված են լինում ֆիզիկական ահագին ուժի ծախուել։ Դերջապես, թերություն և հանդիսանում նաև այն, վիր մատյանալին հաշվառման դեպքում հնարավոր չե ընթացիկ հսկողություն սահմանել հաճախորդների, վճարումների ժամկետների և այլ անհրաժեշտ տեղիկությունների վրա։

Մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ, կատարելագործված հաշվառման կաղմակերպման հարցերը դրված են առաջին հերթին, թե կուսակցությունը, թե կառավարությունը, և թե հասարակությունը զրադիւ են սոցիալիստական անտեսության նրա տնտեսական պրոցեսների ամբողջ բազմադարնությամբ՝ հաշվառումը կարգավորելու միջոցառումների կիրառմանը։

Մենք պարում ենք պլանավին անտեսություն Մենք ամեն դարկան պետք ե գիտենանք, թե այդ պլանն ինչպես և կատարվում իր քանակական, վորակական և արժեքային արտահայտություններով։

Մենք պետք ե իմանանք թե փաստական աշխատանքն ինչպես և շեղվում պլանավին առաջադրանքներից։ Մենք պետք ե իմանանք այդ շեղումների պատճառները, վորպեսզի հսարագործություն ունենանք վերացնելու այն։

Ընդ գորում այդ բոլորը մենք պետք ե իմանանք զործառնու-

թյունը կատարելուց անմիջապես հետո, և վոչ թե լերկար ժամանակ անցնելուց հետո:

Մեր ձեռնարկությունն երի և տնտեսական միավորների տնտեսաշվարը ստիպում է մեզ աշխատանքի պրոցեսում հայտնաբերել վերջինիս արդյունքները, նրա շահագիտությունը և պլանից կատարված շեղումները և (տնտեսումը և գերածախըը). Միաժամանակ հաշվառումը պետք է լինի մաքսիմալ չափով պարզ, բոլորին հասկանալի և եժան: Ան բոլոր խնդիրները, վորոնք այսոր դրված են խորհրդային հաշվառման առաջ, հնարավոր չե ի հարկի լուծել միայն բալանսավիճ հաշվառման մեթոդներում:

Այսուղ մեզ ոգնության են գալիս վիճակագրության, ոպերատիզ տեխնիկական հաշվառման մեթոդները, և որդանապես միանալով բաշնությին մեթոդի հետ, տալիս են միասնական հաշվառում:

Խորհրդային հաշվառման առաջ կանգնած այս բոլոր հոկալական խնդիրների առկայության պայմաններում անհրաժեշտ ենան վերջնիս (հաշվառման) համապատասխան կազմակերպումը, անհրաժեշտ և գորոնել նոր մեթոդներ, նոր ուղիներ, տարրեր այն բոլորից, վոր իր ժամանակին ցարական մերժուածանից մեզ ժառանգություն անացած հին կապիտալիստական հաշվառումից մենք ընդունեցինք վորպես հիմք-խորհրդային հաշվառման թյուն» կառուցելու համար:

Հաշվային տեխնիկայի բարելավման նպատակով լայն չափով ոգտագործեց հին դեռ ևս XVIII դարում առաջարկված մի մեթոդ, վոր գործադրում և գրագրանային գործում, — Խարտային մերողը:

Ա. գ մեթոդի ելությունն այն է, վոր դրանցումները կատարվում են միմւանց չամրացրած առանձին թիրթիկների (խարտերի) վրա:

Այդպիսով, քարտը հանդիսանում է վորպես զրքի թիրթ, վորը կազմի մեջ չի դրված:

Համախ քարտն անվանում են պատ թիրթ:

Հատ բովանդակության տարրերում են բարերգելու լին բարեհիլու:

Առաջինն իր մեջ պարունակում է միայն վորեն մեկ գործառնության գրանցում, իսկ լերկրորդը՝ անորոշ քանակով գործառնությունների գրանցումներ:

Հատ նպատակի, վորի համար քարտը պահպում է, պետք և տարրերի համապատակի համար (վորի վրա կատարվում են հաշվային գրանցումներ):

Վերջինս գործածվում է հետևյալ կերպ: —

Հաշվային քարտերը բացվելուց հետո գրվում են արկղի մեջ, վոր սովորաբար կոչվում է խարտարկ:

Քարտարկում քարտերը պահպում են վորոշ կարգով, վոր ընտր-

ված են բառ հատկանշերի՝ բառ հաշիվների, իսկ վերջինիս սահմաններում — և ով. ալրուրենով կամ մի ալ հատկանշով և այլն:

Քարտերի յուրաքանչյուր խումբ բաժանված ե մյուսից հատուկ կարտոններում քարտ-բաժանիչով, վորի վրա սովորաբար վոչ մի գրանցում չի կատարվում:

Բաժանիչն իր վերին մասում ունի լեռուտ, վորի վրա գրվում է այն խմբի աւունը, վորին տվյալ բաժանիչը զատում է: Այդ լեռուտները չափազանց անգրծնական են: Չուտ մաշված են և պոկիում: Աւստի դրանց փոխարեն սովորաբար գործ են ածվում հատուկ մետաղյա թիրթիկներ վոր ներքեւ մասում ունեն սեղմիչներ: Այդ թիթեղները կոչվում են ինդիկատուններ կամ հեծյալներ (գերմաներեն՝ Reiter-ռաջտեր):

Նոանց սովորական չափն ե 6, 9, 18, 26, 37 և 52 միլիմետր Քարտարին մեթոդի գործածությունը —

ա) հնարավորություն ե տալիս խոշոր չափերով աշխատանքի բաժանման:

բ) զատում ե գործող հաշիվները ավարտվածներից, այնքան, որոքո՞ն հաշվիր փակելիս վերջինիս քարտը հանվում է քարտարկղից և գրվում ե թղթապատճենին սեջ:

գ) հավաքում ե մի տեղ այն հաշվիր, վոր տոմարացին հաշվառման ժամանակ ցրված ե զրքի զանազան տեղերում, քանի վոր հաշվիր քարտը լրացված ե գրանցումներով, բաց և արվուծ լերկրորդ, լերրորդ և այլն քարտեր, վորոնք զրքում են առաջինի հետ:

դ) հեշտացնում ե զատակափորումն ու հարկավոր հաշվիր գտնելը, վորովհետև քարտերը շատ հեշտ ե դասավորե, ուղած հատկանշով արուրենուք, և ով. իսկ քարտը գտնելու համար այբուբենը միշտ ել աչքի առաջ և ինդիկատորների վրա:

յի) տալիս ե քարտեր պատրաստելու համար գործադրվող թղթի զդալի տնտեսում:

Այդ տնտեսումը, համեմատած մատյանների հետ առանձնապես զգալի յե սացիսնալ ձևաչափեր (ֆորմատներ) մտցնելու գեղքում, ինչպիսին են ДИИ նորմալ չափերը, վորտեղ ամենափոքր քարտը Ա8-52×74 և, ամենամեծը՝ Ա4 210×297.

զ) հնարավորություն ե տալիս սահմանելու հսկողություն վճարումների ժամկետների, հիշեցումներ ուղարկելու վրա և ալին:

Դա կատարվում է քարտի վերին մասում մանր ինդիկատորներ (և միիմետք) հագցնելով:

Վերջինս ունի տպագրած թվեր, ամսաթվերը ե-1-31(1, 3, 5, 7, 9 և այլն զույգերը յերկու կենացերի միջև) և ամիսները:

Թղթիրի, ամսաթվերի և ամիսների վրա ոլոյմանավորված գույնի

Հերկու ինդիկատորներ տեղավորելով (որ. մարումը՝ կարմիր, սպառավագը՝ կանաչ) և քարտարկին ամեն որ դիտելով հարավոր և առանց վորեն քաղվածքների հետեւ ժամկետերին, պայմանագրերի կատարմանը և ալիք:

Ե) հարավորություն եւ տալիս դործադրելու մեքենաներ (գրամեքենա, հաշվող-գրամեքենա և այլն), այսինքն՝ քարտային մեթոդի կիրառելն իր հետեւ քերեց հետեւալաստիճանը՝ հաշվառման մեքենայացման հարավորությունը:

Ը) հարավորություն տվից հաշվալին տեխնիկալում լայնորեն դործադրելու պատճենահան մեթոդը. վոր հաշվալին տեխնիկալի ռացիոնալացման բարկրորդ հիմնական մեթոդն եւ հանդիսանում:

Վերջնիս մուծումն իր հերթին տարավ դեպի արտազրություններէ նվազեցում, — մի քանի ուղղությունների գրանցումները (որինակ՝ ժամանակագրականը և սիստեմատիկը) մեկի մեջ համեմատելու ոգնությամբ:

Պարզ ե, վոր վորքան քիչ եւ արտագրությունը, այնքան եւ քիչ են սխալները:

Հետևաբար նոր հաշվառմանությունն սպավում եւ հետեւալ հիմնական մեթոդներից —

Քարտային մեթոդ և  
պատճենահան մեթոդ:

Բացի զրանցից նոր ձևերը կիրառվում են պարզեցրած մատյաններ (որինակ, զբամարկալին), ինչպես նաև ամեն կերպ կրճատում են գրանցումների բովանդակությունը, աշխատելով նրանում հիշատակել միայն ամենաառհաժեշտ տվյալները և տեղավորել այդպիսին մի տողում այն հաշվով, վոր յիրկու միմյանց թղթակցող հաշիվների զրանցումները մեկը մը ւսին լրացնի:

Ներկալում ընդհանուրի կողմից ընդունված կանոն եւ հանդիսանում հաշիվների բառային արտահայտությունը փոխարինել հաշվալին ֆորմուլայում) թվային արտահայտությամբ (հաշվի շիֆրով), դնելով բալանսի հաշիվները և լենթահաշիվները հատուկ աղյուսակում, վոր կրում եւ հաշվային պլան անունը, վորտեղ լուրաքանչյուր հաշվին (ինչպես և հաշիվների և լենթահաշիվների խմբին) հատկացված եւ վորոշ են:

Հաշվային պլանը կարող եւ կազմվել մի քանի լեղանակով:

Նրանցից ամենասուացիոնալը պիտի համարել բալանսի հաշիվների տառնորդական դասավորման լեղանակը:

Այդ լեղանակի հյությունն այն ե, վոր բալանսի բոլոր հաշիվները բաժանվում են 10 խմբի լորաքանչյուր խումբը-10 հաշվի, իսկ լորաքանչյուր հաշիվը-10 լենթահաշվի: Տասը—դա մաքսիմում

ե (բայց վոչ պարապեկը կանոն), բաժինները, խմբերը, հաշիվները և լենթահաշիվները կարող են լինել և ավելի պակաս:

Պրակտիկան ցուց եւ տալիս, վոր ցանկության դեպքում համարլա միշտ ել հարավոր եւ համարել այդ տասնորդական դասավորմանը:

Յուրաքանչյուր խումբ, հաշիվ և լենթահաշիվ՝ ունի ներքին համարակալում 1-րդ մինչև 9-ը:

Այսպիսով, լենթահաշվի շիֆրը բաղկացած կլինի 3-թվանշանից խմբի, հաշվի և լենթահաշվի թիվուց:

### Որինակ՝

Խումբը		Դիմավոր հաշվը		Ցենթրական համար	
Համար	Անունը	Համար	Անունը	Համար	Անունը
0	Դաւթ	00	Շենքեր և կառուցվածքներ	000	Շենքեր արտադրական ոժանակական պահպանության առավագանությամբ
01	Սարքեր և մեքենաներ	001	Բնակչության կառուցվածքներ և դրանց սպասարկում		
02	Գործիքներ և այլն	002	Կառուցվածքներ		
0 1 0	Շարժիքներ և այլն	0 1 0	Շարժիքներ և այլնություններ		
0 2	Տեխն. սարքեր և մեքենաներ	0 2	Տեխն. սարքեր և մեքենաներ		

### Կրկնության հարցեր

1. Գրանցումների ինչ յիրկու կարգ գիտե՞ք.
2. Վորն ե ժամանակագրական գրանցման հիմնական մատյանը.
3. Վորն ե սիստեմատիկ գրանցման հիմնական մատյանը.
4. Ի՞նչին են ասում ոժանակական մատյանները.
5. Ի՞նչի համար են նրանք.
6. Մատնանշեք սոցիալ ստական և կապիտալիստական հաշվառման խնդիրների սիջե յեղած տարրերությունը.
7. Ի՞նչ ե ներկալացնուս իրենից հին իտալական ձեզ.
8. Ցուց տվեք նրա հետագա դարպացումը.
9. Վորն ե գերմանական, ամերիկան և ֆրանսիական ձեզ.
10. Թվեք հաշվառման տոմարային մեթոդի թերությունները
11. Վորն ե քարտարկին մեթոդը.

12. Ի՞նչ առարերություն կա քարտ և ամփոփման թերթ հասկացողությունների միջև։

13. Ցուց ավել քարտ-որդերի և քարտ-հաշվի մեջ լեզած տարբերությունը

14. Ի՞նչ առավելություններ կան հաշվիտարության մեջ քարտային մեթոդ անցկացնել ոց հետո։

15. Ի՞նչ և ինդիկորը

16. Ի՞նչի համար ե պետք բաժանիլը

17. Ի՞նչ միջոցով ե վերացնում հիմ հաշվապահության ամենագլխավոր թերություններից մեկը՝ արտադրումը։

18. Նպատակահարմար և արդյոք հաշվառման նոր ձևերի ձգտումը գրանցումների բռնվանդակությունը կրճատելու տեսակետից և ինչ միջոցներով ե կատարվում այդ կրճատումը։

19. Ի՞նչ և հաշվային պլանը

20. Նրա կառուցան վեր լինանակն ե ավելի ռացիոնալ։

## Յ-ՐԴԻ ԹԵՄԱՅՑԻՑ ՀԵՏՈ ԶԵՏԵՂԱՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

### № 22 Գրանցումները վարչության մոտ

1.) Դեբետ.	Բաժանմունք . . . . .	15.375
	Կրեդիտ. Ազրանքների բաց թողում . . . . .	15.375
2.) Դեբետ.	Ազրանքների բաց թողում . . . . .	15.000
	Կրեդիտ. Ազրանքներ . . . . .	15.000
3.) Դեբետ.	Գերբանկ բառ հաշվարկների . . . . .	8.200
	Կրեդիտ. բաժանմունք . . . . .	8.200

### Բաժանմունքում—

1. Դեբետ.	Ազրանքներ . . . . .	15.375
	Կրեդիտ վարչություն . . . . .	15.375
2. Դեբետ.	Դրամարկղ . . . . .	300
	Դեբետ. Վարչություն . . . . .	8200
	Կրեդիտ իրացում . . . . .	8500
3. Դեբետ.	Իրացում . . . . .	7.687.50
	Կրեդիտ. Ազրանքներ . . . . .	7.687.50

### № 23. Գրանցումներ վարչության մոտ

1. Դեբետ.	Բաժանմունք . . . . .	15.000
	Կրեդիտ. Ազրանքներ . . . . .	15000
2. Դեբետ.	Գերբանկ բառ հաշվարկներ . . . . .	8.00
	Կրեդիտ բաժանմունք . . . . .	8200
3. Դեբետ.	Բաշխերի ծախքներ . . . . .	2000
	Կրեդիտ. Դրամարկղ . . . . .	2000
4. Դեբետ.	Շրջանառության ծախքներ . . . . .	1.625
Դեբետ.	Բաժանմունք . . . . .	375
	Կրեդիտ. բաշխերի ծախքներ . . . . .	2000

### Բաժանմունքում—

1. Դեբետ.	Ազրանքներ . . . . .	18000
	Կրեդիտ վարչություն . . . . .	15000
2. Դեբետ.	Դրամարկղ . . . . .	300
	Դեբետ. վարչություն . . . . .	8200
	Կրեդիտ իրացում . . . . .	8500
3. Դեբետ.	Իրացում . . . . .	7.500
	Կրեդիտ Ազրանքներ . . . . .	7500
4. Դեբետ.	Շրջանառության ծախքներ . . . . .	375
	Կրեդիտ վարչություն . . . . .	375

### № 24. Գրանցումներն առաջն բաժանմունքում—

1. Դեբետ.	II բաժանմունք . . . . .	1000
	Կրեդիտ պետ բանկ ըստ հաշվարկների . . . . .	100
2. Դեբետ.	Ազրանքներ . . . . .	3000
	Կրեդիտ Ա-րդ բաժանմունք . . . . .	30000
3. Դեբետ.	II Բաժանմունք . . . . .	2000
	Կրեդիտ վարժություն . . . . .	2000

### II-րդ Բաժանմունքում—

1. Դեբետ.	Շրջանառության ծախքներ . . . . .	1.000
	Կրեդիտ I-ը Բաժանմունք . . . . .	1000
2. Դեբետ.	-I-ը Բաժանմունք . . . . .	3000
	Կրեդիտ ապրանքներ . . . . .	3000
3. Դեբետ.	Վարչություն . . . . .	2000
	Կրեդիտ I-ը Բաժանմունք . . . . .	2000

### Վարչության մոտ—

1. Դեբետ.	I-ը Բաժանմունք . . . . .	2000
	Կրեդիտ II Բաժանմունք . . . . .	2000

### № 25. Ամփոփված բալանսը կտա

#### Համար առիկի

Դրամարկղ	• . . . .	6000
Գետ բանկ բառ հաշվարկ	• . . . .	225.000
Ազրանքներ (նընարժեքով)	• . . . .	400.000
Ազրանքներ վաճառքի գնահատումով	• . . . .	242.000
Զանազան պարտապահներ	• . . . .	23000

Հակամեն . . . . . 946.000

### Համար պաստիվիլի

Կանոնադիր ֆոնդ	• . . . .	860.000
Զանազան պարտատերեր	• . . . .	15.000
Ազրանքներ վերադարձեր	• . . . .	22.000
Կուտակումներ	• . . . .	49.000

Հակամեն . . . . . 946.000

## ՊԱՏՃԵՆ ՀԱՇՎԱՌԻՔ

(Կարուծել)

Հաշվառման տեխնիկայի ուսցիոնալացման պատճենահան և քարտային մեթոդների գործադրության հիման վրա, վոր նկարագրված ե 8-րդ թեմայում, ինչպես արտասահմանում, այնպես իլ մեզ մոտ ԽՍՀՄ-ում, ստեղծված են բալանսային հաշվառման մի շարք ձևեր:

Մեզ մոտ Խորհրդային Միության մեջ առավել ուշադրության արժանի համարված ե պատճենահան-քարտային ձևը, «պատճեն հաշվառը»:

Այդ ձեզ վերջին տարիներս ամենալայն չափով տարածվեց Միության հիմնարկություններում և ձեռնարկություններում, ուստի և նրա ուշադրությունասիրության վրա անհրաժեշտ ե առանձնապես կանգ առնել:

«Պատճեն հաշվառքը» գերմանական «Դիֆինիտիվ» ձևի ձևափոխումն ե մեր տնտեսության պայմանների համեմատ:

**1924-25 թվերին Պետական իր հաշվապահներին գործողեց արտասահման և անտեղից բերելով, գերմանացի հրահանգիչների կոնսուլտացիայի ողնությամբ իր մոտ գործադրեց «Դիֆինիտիվ» հաշվապահության ձևը:**

Աստիճանաբար ձևափոխելով և մեր պատճեններին հարմարեցնելով, մի շարք տարիների ընթացքում աստիճանաբար մենք ստեղծեցինք պատճենահան-քարտային ձևը, վորն և ստացավ «պատճեն հաշվառք» անունը:

«Պատճեն հաշվառքի» սարքավորումը բաղկացած ե հկույալ առարկաներից:

1. Պատճենահան ալյումինե տախտակից, վոր ձախ կողմից ունի յերկու սեղմակ վերամբարձ լծակներով:

Աջ ձողանը, վոր քարտ սեղմելու համար ե, ստորին լծակը սեղմելիս բարձրանում ե: Վերին լծակը միաժամանակ բարձրացնում ե յերկու ցողանները, աջը և ձախը: Տախտակի ձախ յեղրին շինված ե փոքր յելուստ, վոր որագրի թերթի համար ծառայում ե վարպես հետակալ:

Ներկայումս գործածվում են A3 (297×420) չափի տախտակներ, հարմարեցրած B4 (250×353) որագրին: Այդ ապարատներում տախտակի ձախ յեղրի հենման յելուստից մինչև աջ սեղմակային ձողանի յեղրի ծառը յեղած տարածությունը հավասար է 48 միլիմետրի: Սա անհրաժեշտ է իմանալ վարովների մատյանի թերթի սդուակար տա-

բածությունն սկսվում է հենց 48 միլիմետր տարածությունից, հաշվելով նրա ձախ յեղրից:


2. Քարտերի փայտյա արկղը պատրաստվում է կափարիչով և փակվում ե ներքին կողպեքով:

Արկղի հատակն ունի փոսիկներ հատուկ հենակային մետաղաթիթեղներ դնելու համար, վորոնք նրա մեջ մտնում են իրենց յելուսաներում:

Բացի դրանից, արկղի մեջ քարտերին ուղղահայաց դիրք տալու համար գործ ե ածվում մետաղակայությունը ձողիկ, վոր աեղավորված ե արկղի կողերի ակոսներում:

Իր ներքին մասով արկղի չափը պետք է համապատասխանի քարտերի չափին:

3. Հենման ալյումինե թերթեր, վորոնք հավասար են քարտերի չափին: Թերթերն ունեն  $1\frac{1}{2}$ -2 մմ. հաստություն և ծառայում են բարակ թղթից պատրաստված քարտերին ավելի մեծ կայունություն տալու համար: Մեկ արկղի համար գործ ե ածվում 5—6 այդպիսի թերթ: Իրենց վերին մասով նրանք հենվում են մետաղայա ձողի վրա, իսկ ներքին մասով՝ յերկու յելուսաններով մտնում են արկղի փոսիկների մեջ:



4. Կարտոնի բաժնեմիներ, վոր հավասար են քարտերի չափին: Նրանք գործածվում են ըստ հաշվիների: Ըստ բաժինների ու խմբերի, ըստ հաշվաների, յենթահաշվիների, ըստ այբուբենի, ըստ № Ա-ի և այլն դասղասումը (կլասսիֆիկացիա) հեշտացնելու համար: Բաժանիչները տեղավորվում են այն հաշվով, վոր 10—15 քարտին մեկից ավելի զատիչ չընկնի:

5. Խնդիրացներ, վոր հագցվում են զատիչների վրա, դասավորման հատկանիշը նշանակելու համար: Նրանց ոգտագործելու յեղանակը ցույց է տրված վերևում (8-րդ թեմայում):

Քարտերը պետք եւ տեղավորել դասդասման հատկանշով բաժանիչի առջևը նրա հայար, վորպեսզի վերջինս (դասդասման հատկանիշը) աշխատողի աշքի առաջը լինի և չփակվի քարտի մի մասն առաջընթերելիս:

6. Յուղակագրիչներ (թղթապանակներ), քարտերի և մատյանների լրացրած թերթերը տեղափորելու համար։

Նրանք պատրաստված են հաստ կարտոնից և իրենց կոնտկում  
(կողում) ունեն մետաղյա թիթեղներ, նրանց ամբացը ձողերով, վո-  
րոնց վրա և քարտուրը հագցվում են:

7 Մեծ զգայնության պատճենահան քուղը, պատրաստված համապատասխան շաղկաբառից համար, վոր իր չափերով համապատասխանում և պատճեն հաշվառքից բանկների չափին:

8. Տալիք Ֆլյանենի բանկով. Վար գրանցման պատճենը պաշտպանում  
և քսմավելուց և սրբելու հնարավորությունից:

Գրանցման պատճենը զգուշությամբ փոշոտում են տալկով քսակի միջոցով. վորից հետո նա դառնում ե ավելի կայուն (չի ջնջվում) և չե քսմավում:

9. Գրչածայրեր կամ մատիտներ, պատճենահանձան համար: Ներկայութեավորապես գործածվում են «պատճեն հաշվառքի» համար հատկապես պատրաստված մատիտներ:

10. Առելիստ քարտերը ցաւցակագիրու համար, վորով ցուցակագրվում են բացաձագրտերը, Այդ ցուցակագրման կարգը մենք քննության կառնենք հետագալում:

11. Նաև պիտեւ: «Պատճեն հաշվառք» ձեռւմ հաշիվների թղթակցությունների նշումը կատարում ե հենց փաստաթղթի վրա շտամպ դնելով (տես ել 65):

Ելքը (ծածկա- պը)	Քարտի ներ	Եղբ	Անուններ	Հասցեն	Քարտը բաց անելու ժաման. (գատան)

Ծամպում ցույց ե տրվում. 1) դատան վորով տվյալ փաստա  
թուղթը պեսք ե զբանցված լինի (չորս նշան՝ առաջին յիրկուսը —  
ամսաթիվն են ցույց տալիս, հետեւյալ յիրկուսը — ամիսը. 2) Փաստա-  
թղթի հերթական Ա-ը (որվա կամ ամսվա). 3) Այն քարտարկղի Ա-ը,  
վորը հաշվի յի առնում դերիտարի հաշիվը. 4) Դերիտարի հաշվի շիֆրը.  
5) Կրեդիտորի հաշվի քարտարկղի Ա-ը. 6) Նրա հաշվի շիֆրը և 7) Գու-  
մարը. Շտամպի 3—7 սյունակները լրացնում ե քարտարկղի հսկիչը  
իսկ 1—2 սյունակները լցնում ե հսկիչ-խմբավորողը. Շտամպը ստո-  
րագրում ե վերահսկիչը, իսկ կոնցիրովկան ստուգելուց, դատան և Ա-ը  
դնելուց հետո՝ վերահսկիչ-խմբավորողը: Բացի այդ շտամպից, գոր-  
ծածվում ե նաև յուրաքանչյուր խմբավորված փաստաթուղթը նշելու  
համար հետեւյալ շտամպը,

U u g h l w g q w d  
· · · · · 193 · ·  
M · · · · ·  
R w P m M · · · · ·

Ինչպես հակ հատուկ շտամպներ դրամարկղալին գործառնությունների համար Ընդգծելու փոխարեն հաշվվը՝ փակելիս, գործ և ածվում յերկշգանի շատամպ:

12. «Պատճենաշղվառքի» սարքավորման մեջ մանում են նաև բլանկերը (ուրագրային թերեւրը յևի բարեւրը): Նրանք պատրաստվում են փափուկ, բայց բավականաչափ խիտ թղթից:

Բոլոր բլանկները գործ են ածվում ստանդարտ չափերի. — քարտը — A4, այսինքն  $210 \times 297$ , իսկ որագիրը B4  $250 \times 353$  մմ. Յերեխնեն (որինակ, բանվորների և ծառայողների հետ հաշվարկները հաշվի առնելու համար) գործ են ածվում A3 չափի մատյան, այսինքն  $297 \times 420$  մմ. Սակայն աստիճանաբար գործածության մեջ են դրվում առանց բացառության բոլոր գործածությունների համար մատյանի միասնական B4 չափը:

Քարտի բլանկի վրա ձախ կողմեց թողնվում է 20 մմ. ազատ տեղ. այդ քսան միլիմետրանոց լուսանցքը կծածկվի պատճենահան տախտակի և ցուցակագրիչի սեղմակներով: Վարպեսզի արդ տարածությունն իզուր տեղը անողուա չկորչի բլանկի ներքին բովանդակության համար, նրա վրա կարելի է տեղափորել հիմնարկության անունը:

Ինչպես արդեն ասացինք, որագրային թերթում պետք ե ազատ թողնել 48 մմ., վորոնք գրանցման ժամանակ գտնվում են սեղմակների ձողակների տակ:

Ինչպես քարտի, այնպես ել որագրի լուսանցքներն ունեն լերկուական կլոր անցքեր ուղղամասորի մեջ տեղափորելու համար:

Որագրի թերթը ներքեւում ունի «առվյալ լերեք հանրագումարը» և «փոխանցումն հետեւալ եջին» սյունակները:

Քարտերի և որագրի մաքուր բլանկները պահվում են գործավարի (արխիվարիուսի) մոտ փոկ պահարանում և ըստ կարիքի ու սահմանափակ քանակությամբ արվում են աշխատակիցներին ստորագրությամբ:

Ինչպես արդեն ասացինք, քարտերի ցուցակագրումը կատարվում է հատուկ ուղեստեներում (կամ ուղիստըներում ցուցակներում):

Քարտը ցուցակագրելիս հիշատակվում է.

ա) հերթական համարը, վորը դրվում և նաև քարտի վրա.

բ) յերկրորդ կարգի հաշվի անունը, իսկ այն գեպըում, յեթե այն միարեւում է յերրորդ անձին—վերջինիս հասցեն.

չ) քարտն սկսելու ժամանակը (դատան).

Ցուրաքանչյուր առանձին քարտարկի համար կազմվում ե վոչպակաս սեկ ուղեստարից (ցուցակից): Յեթե մի հաշվի կամ հաշվների խմբի սահմաններում քարտերի քանակը մեծ է, նրանց ցուցկագրումը կարող ե կատարվել նաև առանձին ուղեստարներով: Այսպիսով մեկ քարտարկում կարող ե կազմվել մի քանի ուղեստրներ:

Քարտերը ցուցակագրվում են այլպիսիներն սկսելու (բացվելու) ժամանակի, ըստ վորում գույություն ունի ցուցակագրման յերկու յեղանակ. առաջինը՝ ցուցակագրվում ե հաշվապահության մեջ բացվագոյւրացնյուր առանձին քարտը (բլանկը) և յերկրորդը՝ մեր տեսակետից ավելի կատարյալ և նվատակահարմարը՝ վոչ թե քարտերն են ցուցակագրվում, այլ ստորին կարգի ոժանդակ հաշվները: Յերկրորդ յեղանակի գործադրության ժամանակ քարտը համարակալվում ե այդ հաշվի Ա-ով (համարիչում), իսկ համարաբռում ցույց ե տրվում եջի Ա-ը: Միևնույն ոժանդակ հաշվի սահմաններում բացվող հետագա քարտերի ցուցակագրությունը կատարվում ե ուղեստարի սլունակում դնելով «Եջի Ա-ը» (քարտի հիմնական Ա-ի հետ միենուն տողում): Այդ լեզուակի գործադրման գեպըում համարակալությունը կլինի հետեւալ կերպու:

Հաշվի ցենտրոսուղի — Ա 25/1, 25/2, 25/3, 25/4 և այլն:

Այն քարտում, վորի մեջ շարունակությունն ե սկսվում, վերջին տողում ցույց ե տրվում. «Փոխանցվում ե Ա քարտը» (2, 3 և այլն), իսկ շարունակող քարտում՝ վերջին առաջին տողում դրվում ե. «Փոխանցվում Ա ... քարտից» (1, 2 և այլն):

Դոյություն ունի քարտի հերթական Ա տարրու մի քանի յեղանակ:

Վոմանք բոլոր հաշվների համար ստեղծում են միասնական համարակալություն—Ա 1-ից մինչև անսահման թիվ: Այդ գեպըում մեկ քարտնսաւին հաշվի սահմաններում համարակալման վորոշ ներդաշնակություն պատճառելու համար ԱԱ-ի ընդհանուր մասսայից վերջինիս հատկացվում ե ԱԱ-ի վորոշ քանակ (առաջին գումարները Ա 501-ից մինչև 600, փոխազարձ հաշվներ—Ա 601-ից մինչև 625, պարտապահներ—626 ից մինչև 800 և այլն):

Մյուսները պնդում են, թե այդպիսի կարգը, մի կողմից, ստեղծում ե համարների ավելորդ մեծացում (մինչև 5 նիշ), իսկ մյուս կողմից՝ մի հաշվի սահմաններում խախտում ե համարակալության անընդհատությունը, զորվիճությունը չի կարելի նախատեսնել, թե այս կամ այն հաշվի համար քանի Ա պետք ե թողնել Ռւստի նրանք առաջարկում են ցուրաքանչյուր բալանսալին հաշվում սահմանել հերթական համարակալում Ա 1-ից:



Մեր տեսակետից վերջիններս լիովին իրս վացի յեն, և քարտերը պետք ե համարակալի միայն բալանսավիճն հաշվի առնմաններում:

Քարտերի ցուցակագրումը կատարում են բլանկներ ստացող աշխատակիցները. վերջինս պարտավոր ե հաշիվ տալ իր ստացած բլանկների քանակի համար, հայտնել, թե արկում (քարտարկում) քանի սկզբած (բացված) քարտ կա, քանի բլանկ ե մնացել և քանին և փչացել: Վորևէ պատճառով բլանկ փշանալու դեպքում, աշխատակիցը պարտավոր ե պահել այդպիսին և պարբերաբար հանձնել արխիվ մաքուր բլանկների հետ փոխելու համար:

Նախքան աշխատանքի տեխնիկալի նկարագրությանն անցնելը, պետք ե ծանոթանալ հաշվալին աշխատակիցների այն հիմնական կատագորիաների պարտականություններին, վորոնք մասնակցում են կազմակերպված «պատճենահաշվառք» ամբողջ ցիկլին:

Այդ կատեգորիաները չորսն են.

1. Գործակար, վորը

ա) ստանում և նայում ե ստացվող փոստը,

բ) բաշխում ե այն կատարողների («մշակողների») մեջ,

գ) հետևում ե փաստաթղթերի մշակման ժամկետներին,

դ) ուղարկում ե լեյից թղթակցությունները.

լե) քարտարկում արխիվում պահելու համար և գրանցած փաստաթղթերն արխիվում պահելու համար և

զ) վարում ե հաշվալին փաստաթղթերի ընթացիկ արխիվը.

2. Վերահսկչ, վորի պարտականությունն եւ

ա) ստուգել ստացված փաստաթղթերը (ստուգում թվաբանական, ստուգում օկտապատճեղի բոլմաղակության որենքի պահանջներին համապատասխան լինելու տեսակետից):

բ) կաղմել լեյից փաստաթղթերը (ավելո, նամակ և այլն).

դ) հետևել վճարումների և ստանալիքների ժամկետներին.

դ) տալ իր տրամադրության տակ գոնվող քարտարկությունները հաշվալին հաշվալին վերաբերքալ բոլոր տեղեկանքները ու տեղեկությունները.

լե) կաղմել հաշվալին հոդված (մատնանշել հաշիվների թղթակցությունը շտամպում):

Վերահսկիչը փաստաթղթերն ստանում ե գործակարից և ստուգում ե, վորոշ ժամկետից ավելի (1-2 որից) չպահելով իր մոտ:

Ստուգված փաստաթղթերի վրա դնում են շտամպ, մատնանշելով հաշիվների թղթակցությունը և հանձնում վերահսկիչ խմբավորին:

Այն փաստաթղթերը, վորոնք հաշվալին զրանցում չեն պահանջում, այլ միայն նայվում են, նրանց վրա նայելու մասին անպար-

ման նիշ ե դրվում և հետո ուղարկվում գործադրություն արխիվում պահելու համար:

Համապատասխան ոպերատիվ բաժինների հետ վերահսկիչը կապվում ե անմիջականորեն, մեջ առաջ հաշվառման և հաշվետվության սեկտորի վարիչին (դիմավոր հաշվապահին):

Կարևոր կամ սկզբունքային նշանակություն ունեցող փաստաթղթերն անցկացնելու համար (զբանցելու համար) վերահսկիչը պարտագոր և ստանալ գլխավոր հաշվապահի վիզան:

Վերահսկիչը վարում ե իր իրավասության տակ յեղած քարտարկով հաշվի առնվող հաշիվներին վերաբերող ամբողջ գրականությունը:

Վերահսկիչը պարտագոր ե քարտարկով ծանրաբեռնված և թերարհանված լինելու մասին ժամանակին տեղյակ պահել հաշվառման աշխատանքների ղեկավարին և վերահսկիչ-խմբավորողին:

3. Բարտակրովար, վորին հանձնաբարկում եւ—

ա) ճիշտ և ժամանակին գրանցել մատյանում և քարտում այն բոլոր փաստաթղթերը, վորոնք ստացվում են վերահսկիչ խմբավորողից

բ) որվա վերջին կազմել խմբավորող թերթեր, մատյաններ, վորոնք ինքն ե վայում.

գ) որվա վերջին ստուգելուց հետո հանձնել վերահսկիչին որվա ընթացքում զրված մատյանային թերթերը.

դ) հաշվել քարտերն ու մատյանները:

լե) վերահսկիչի հետ համահավասար պատասխանատու լե քարտարկում լեղած քարտերի և մատենային թերթերի անվթար պահանջման համար:

4. Վերահսկիչ-խմբավորող, վորի պարտականություններն են.

ա) ցուցակագրել դրամարկղից, գործավարից և վերահսկիչներից ստացած փաստաթղթերը ցուցակագրման տեղեկագրում, այդ բոլորն պատշաճ կերպով նայելուց և ձեռկան կողմից ստուգելուց հետո,

բ) փաստաթղթերի համարակալումը.

գ) թղթակցող հաշիվների փաստաթղթերի վրայի նշումների ստուգումը (կամ նշել նայած գործառնության ծավալին),

դ) բոլոր փաստաթղթերը, բացի գրամարկայիններից (վորոնց շրջանառությունները դրվում են որվա ընդհանուր գումարով) ստուգիչ տեղեկագրում գրանցելը.

ե) ամեն որ ստուգել քարտարկություն որագիրը շախմատային ստուգիչ տեղեկագրով.

զ) հավաքել հաշվապահության մեջ որվա ընթացքում զրված բոլոր որագրական թերթերը և ստուգելուց հետո հանձնել գործավարին՝ պահելու համար:

է) բոլոր աշխատակիցների աշխատանքի հաշվառումը;  
Ը) շրջանառությունների շախմատային բարանսի կազմումը;  
«պատճենաշվառքի» անձնակազմի պարտականությունների մասին այս «րինակելի» կանոնադրությունից պարզ յերեւմ և հաշվառման ապարատի աշխատանքի հիմնական տարրերի բաժանումը աշխատաղների խմբերի մեջ.

ա) փաստաթղթերի ընդունումը և բաշխումը կատարողների մեջ.  
բ) մշակում (գրանցման նախապատրաստություն).  
շ) գրանցում և

դ) ստուգում և համեմատում (շրջանառության բարանս);  
Ենթադրդ և յերրորդ խմբի աշխատաղներին հաճախ միացնում են, և այն ժամանակ աշխատավորների այդ խումբը կազմում և հաշվառման ապարատի ստորին կառուցվածքային բաժանումը,—այն և բարտարկը (վերահսկչները և բարտարկղավարը):

Նայած հաշվառման մարմինի կազմակերպման ընդհանուր սկսմային, այդ «քարտարկները» կարող են միացվել մի խմբի մեջ կամ շրվել մի քանի խմբերում (յեթե յուրաքանչյուր խումբն իր մեջ պարփակում և հաշվառման բոլոր տեսակները, դրադվելով այս կամ այն տնտեսական կատեգորիայի հարցերով. որինակ՝ աշխատանք և աշխատավարձ, մատակարարում, արտադրություն և այլն):

Հաշվառման ապարատի խմբերի սահմաններում աշխատակիցների այս կամ այն դասավորումը «պատճենաշվառքի» ժամանակ չի փոխում փաստաթղթերի շրջանառության ընդհանուր սխման:

Փաստաթղթերի ամբողջ շրջանառությունը նորմալ կերպով պետք է կատարվի յերեք որում.

1-ին որը գործակարն ընդունում և փաստաթղթերը, և բաշխում այն կատարողների (վերահսկչների) մեջ.

1-ին—2-րդ որ— վերահսկչները փաստաթղթերը նախապատրաստում են գրանցման համար.

2-րդ որ— վերահսկչները փաստաթղթերը հանձնում են վերահսկչի խմբավորողին, իսկ վերջինս նշանակում և նրանցում հաշիվների անունները:

3-րդ որ— քարտերը գրանցվում են քարտարկներում և ուղարկվում արխիվ:

Այսուհետև անցնենք «պատճենաշվառքով» աշխատելու տեխնիկայի քննությունը:

«Պատճենահաշվառքն» ընդունում և վորպես կանոն՝ այն, զոր վոչ մի գրանցում չի կարող կատարվել քարտում առանց միաժամանակ պատճենը հանելու որագրում և ընդհակառակը՝ գրանցումը մատանում կարող է լինել միայն, զորպես քարտի գրանցման ուստիսկը:

Որագրերի, ինչպես և քարտերի ձեռքի քանակը «պատճենաշվառքում» սահմանափակված չե և կախված է զոր համարությունների

բազմազանությունից, նրանց բնույթից, ծագալից և այլն, չանենայն գեղս, որագրերի նվազագույն քանակը, դա ձեւը և քարտերի քանակն եւ:

Հստ անտեսության գործառնությունների ծագալի, որագրերի միջին թիվը կարող է լինել 3-ից մինչև 8-9:

Գրանցման տեխնիկան հետեւյան եւ:

Աջ ձեռքով բանում են որագրային թերթը, զորը հատկացված ե քարտերի այն ձևի համար, վորի մեջ առաջին ենթին պետք ե կատարվի գրանցումը: Զախ ձեռքով սեղմում են վերին լծակը, զորի հետևանքով բարձրանում են յերկու սեղմիչ ձողանները, և որագրային թերթը գրվում ե նրանց տակը, մինչև վոր հենվի անշարժ ձողանին:

Դրանից հետո լծակն իջեցվում է, և որագրային թերթը սեղմիչ ձողաններով պինդ պահպան և տախտակի վրա:

Մատյանի վերնագրում վերին աջ անկյունում, զրվում է եղինակը կամ աշխատական թղթը (ընթացիկ գրանցման ժամանակ՝ արաբական թղթերով, իսկ մնացորդները փոխանցելիս՝ հառմեյական), մատյանի անունը, յեթե առաջուց տպված չե, ամենը և տարեթիվը:

Դրանից հետո տախտակի վրա ձախ սեղմակի տակ զրվում և պատճենահան թղթի մի թերթ այնպիս, վոր վերջինիս աջ կտրվածքը հասնի ուղիղ մինչև մատյանի «քարտի թղթը» սյունակին:

Մատյանի թերթը պատճենահան թղթի հետ միասին տախտակի վրա մնում և այնքան ժամանակ, մինչև վոր ամբողջովին լցվի գրանցումներով (կամ մինչև որվա վերջը):

Եթե տվյալ քարտարկում տարվում է մի որագրից ալիքի, այդ գեղի պատճեն առաջին որագրերի թերթերը փոփոխվում են, նայած գրանցով զոր գործառնությունների բնույթին և հաշվառման ձերն:

Այսուհետև նայում են զրանցման լենթական հերթական փաստաթղթին: Նայելիս ուշագրություն ե զարձվում փաստաթղթում շարուցված գործառնության եյտեթյան և վերահսկչների նիշի վրա:

Ծանոթանալով փաստաթղթերին, աշխատակիցը քարտարկից հանում և հաշվի շեֆրով քարտը, վոր ցույց ե տված նիշում և ձախ ձեռքով սեղմելով սեղմիչ ձողանների ներքեւի լծակը, բարձրացնում է աջ ձողանը, աջ ձեռքով քարտը դնում ե նրա տակը մինչև ձախ ձողանին հենվելը. այդ գեղի պատճեն, յեթե որագրի սյունակավոր է, ապա քարտի ուղղանայաց սյունակներն ու հորիզոնական տողերը պետք ե համատեղել որագրի նույն սյունակների և տողերի հետ:

Այդ գեղի պատճեն:

ա) յեթե վոչ քարտի վրա և վոչ ել որագրի վրա գրանցում կատարած համարությունը և այլն առաջանական տողերը.

բ) Յեթե որագիրն արդեն մտսամբ գրված է, իսկ քարտը բոլորվին չի լրացրած, այն ժամանակ պետք է քարտի վերին տողը համատեղել որագրի հերթական ազատ տողի հետ, վորը վորոշվում է ծալրի աջ սունակով՝ «քարտի №-ը»: Այդ սունակում, լիթե տողն արդեն բռնված է, գրված է այն քարտի №-ը, վորի վրա գրանցում է կատարված, և ազատ կլինի այդ տողին հաջորդող տողը.

գ) լիբր թե քարտը և թե որագիրը մտսամբ են լրացրած, ապա համատեղվում են նրանց հերթական ազատ տողերը:

Յեթե քարտի տողը համատեղված է որագրի տողի հետ, լծակը իջեցվում է, և սեղմիչ ձողանը քարտը սեղմում է տախտակին: Դրանից հետո կատարվում է գրանցումը:

Վորպեսպի գրանցում կատարելիս մատյանը չկեղսուավի (պատճենաթղթով), պետք է ձեռքի տակը կարտոնի թերթ դնել (քարտի վերեվից):

Սունակների լրացնելու կարգը, վորոնք հանդիպում են լուրաքանչուր քարտում, անկախ նրա ձևից և բովանդակութլունից, հետեւյալն եւ:

ա) «193...» սյունակը—թվականի համար է, վորով փաստաթուղթը գրանցվում է. (ցուց և տրված փաստաթղթերի վրա շտամպում): Դատան գրելիս ոգտվում են հետեւյալ հանոնով. սյունակի խոռագրում գրվում է քարտն սկսելու տարեթիվը (որինակ՝ «2», այսինքն՝ բոլորը միասին «1932»), իսկ «գատա» սյունակում այդպիսին գրվում է չորս նիշերով, վորից առաջին լերկուուը ցուց են տալիս ամսաթիվը, իսկ վերջին լերկուուը—ամիսը (08 հոկտեմբեր—0810).

բ) «փաստաթղթի №-ը» սյունակում գրվում է փաստաթղթի այն № ը, վոր նշանակված է փաստաթղթի շտամպի վրա:

գ) «թղթակցող հաշվի №-ը» սյունակը ծառայում է այն հաշվի շիֆրը նշանակելու համար, վորով տվյալ գրանցման մեջ թղթակցում է գրանցվող հաշվը: Քարտերի շատ ձևերում այդ սյունակը բոլորով վիճ չկա.

դ) քարտի վերջին սյունակում, աջից «հաշվի ստուգիչ №-ը» նշանակվում է տվյալ քարտի №-ը (շիֆրը): Այդ շիֆրը պետք է նշանակել վոչ թե քարտից, այլ անպայման վերաստուգիչ նշանակած հաշվից և այդ սյունակում միատեսակ շիֆրերի առկայությունը ցույց է տալիս, վոր այդ քարտին (հաշվին) չվերաբերող գրանցումներ նրա մեջ չեն արված:

լի) վերջին սյունակով վերջանում է քարտի գրանցումը: Որպես զրում հենց նույն տողի վրա գրվում է այն քարտի №-ը, վորի մեջ գրանցումը կատարված է: Այդ №-ը ցուց է տալիս թե որագրի տվյալ

տողն արդեն գրաղված է գրանցումով, նաև ծառայում է քարտի վերականգնումը հեշտացնելու համար, ինչեւ նա կորել եւ:

Գործառնության բովանդակությունը (տեքստը) հանձնարարվում է տեղավորել վոչ ավել, քան մեկ տողում: Յերբեմն ավելի մանրամասն գրանցման անհրաժեշտությունը չի բացասվում, սակայն վորպես կանոն, անհրաժեշտ է խուսափել շատախոս բավանդակությունից: Վերջինս պետք է լինի կարծ և պարզ: Բովանդակության մեջ անպայման պետք է հիշատակվի փաստաթղթի (հաշվի, ընդունման ակտի, ըեռնադրի և այլն) հիմնական №-ը:

Ստուգման (պունկտիրովկայի) ժամանակ նշումն կատարելու համար հատկացվում է քարտի «ց» սյունակը:

Յուրաքանչյուր փաստաթղթի վրա գրանցում կատարելուց հետո, գրանցում կատարող աշխատակիցը նշում է գրանցում կատարելու մասին, գնելով փաստաթղթի շամապում «քարտի №-ը» սյունակում այն քարտի №-ը, վորի մեջ վոր գրանցումը կատարված է: Դրանցման մասին նշումն անելուց հետո, փաստաթղթը դրվում է թղթապահնակը հետեւյալ քարտարկղին կամ արխիվ հանձնելու համար (լիթե գրանցումը վերջինն է,) իսկ քարտը դրվում է քարտարկղում իր տեղը:

Դրանից հետո գրանցվում է հետեւյալ փաստաթղթութը: Յեթե գրանցվում են խմբավորված փաստաթղթերը, վորոնք մի ընդհանուր հավաքական կարու ունեն (շտամպը, ըստ թղթակցող հաշիվների նշումով), կատարված գրանցման մասին նիշ դրվում է խմբավորող փաստաթղթերից լուրաքանչյուրի վրա ձեր այն շտամպում, վոր ցույց է տրված տղյուսակ և (վորտեղ գրվում է քարտի № ը)՝ իսկ հավաքական շտամպում, «քարտի № ը» սյունակում մատնանշվում է գրանցված փաստաթղթերի գանակը:

Քարտերն սկսելու (բաց անելու) կարգը հետեւյալն է:

Խորագրի առաջին տողում ցուց է տրվում այդ քարտում հաշվի առնվելիք ոժանդակ հաշվի անունը:

Խորագրի լերկորդ տողում, կարիք է նշած դեպքում ցույց է տրվում հաշվի մասին հատուկ տեղեկություններ (հասցեն, զլուխը, նախահաշիվը և այլն):

Խորագրի վերջին աջ անկուսում դրվում է բարանսի հաշվի այն շիֆրը, վորով քարտը բացված է, քարտի №-ը և տվյալ ոժանդակ հաշվի եջի հերթական №-ը:

Յեթե քարտերը բացվում են տարիա սկզբից, նրանց առաջին տողի վրա գրվում է շտամպեր: «առլիք առ 11 եջում»: Մնացորդը պարզելուց հետո գրվում է:

ա) առաջին տողում, լեթե ընթացիկ գրանցումները դեռևս կատարվում են քարտի առաջին եջում, կամ

բ) տվյալ հաշվի վերջին քարտի հերթական աղատ տողի վրա Քարտերում գրանցվող մացորդները պետք է անպայման պատճենավորվեն այնպիսի առանձին որագրերում, վորի եջերը համարակալում են հոռմեյական թվանշաններով:

Դա կատարվում է այն նպատակով, վոր ստուգի սալդոյի գրանցման ճշությունը, մացորդների որագրի ընդհանուր գումարը բարձրացնելին տվյալների հետ համեմատելու միջոցով։ Գրանցումների ընթացքում կատարված սխալները վերացվում են սովորական լեզանակներով։

ա) Ուղղելով, այսինքն՝ ջնջելով սխալ գրված գումարը և վրան ճիշտը գրելով և

բ) կարմիր ստորնոյով, այսինքն՝ կազմելով լերկու հոդված։ —

1) մի հոդված հաշվիների նույն թղթակցությամբ է նույն գումարով, ինչ վոր ուղղելու լենթակա հոդվածն է, սակայն կարմիր թանաքով վորը ցույց է տալիս, թե այդ հոդվածը պետք է դուրս հանվի հաշվելիս և ամփոփելիս (կարմիր թանաքով գրված հոդվածը նույնպես չի մտնում հանրագումարի և ամփոփման գումարի մեջ և 2) ճիշտ հոդված (ըստ թղթակցող հաշվիների կամ գումարի)։

Կարմիր ստորնոն կիսաբիում և այն ժամանակ է երբ չի կարելի հաշվային ֆորմուլայի կամ գումարի պարզ ուղղում կատարել որինակ, յերբ փաստաթուղթը գրանցված է բոլոր քարտերում։

Ստորնոյի գրանցման համար կազմվում է տեղեկանք վորն ստորագրվում և վերահսկիչների կողմից, վորի հիման վրա և կատարվում է ուղղումը։

Կարմիր ստորնոյի գրանցումը քարտում կտարվում է կարմիր թանաքով, բովանդակության մեջ նշանակելով «ստորնո» բառը։ Իսկ այն դեպքերում, յերբ քարտի մեջ գրանցումը կատարվում ել մատիտով, ստորնոյի տողը (տեքստը և գումարը) պետք է ընդդեհ (որպես առանձին) կարմիր թանաքով։

Որագրային թերթում, վորակը ստորնոյի գրանցումն ընկնում է պատճենահան թղթով, «նշումներ» սյունակում կարմիր թանաքով գրվում է «ստորնո»։ Բացի գրանից, ստորնոյի գրանցումների տողերը որագրում ընդգծվում են կարմիր թանաքով։

Ինչպես վերևում արդեն մտանանշված է, հասարակ սխալներն ուղղված են սխալ գումարի ջնջումով և կարմիր թանաքով գրան ճիշտը գրվով քարտում և որագրում առանձին առանձին, յերկու տեղումն ել համապատասխան վերապահումով։

Փաստաթղթի թիվ/Հ. Ա. թ.	Գրանցումների քանակը քարտարկղներում							Փաստաթղթի թիվ/Հ. Ա. թ.	Գրանցումների քանակը քարտարկղներում						
	№ 1	№ 2	№ 3	№ 4	№ 5	№ 6	№ 7		№ 1	№ 2	№ 3	№ 4	№ 5	№ 6	№ 7

Փաստաթղթերը քարտարկղում գրանցելու համար վերահսկիչ խմբավորողը հանձնում է այն ժամանակ, յերբ նրանք ցուցակագրուման թերթում (տես վերևում) համարակալված են (ցուցակագրված են) և գրված ամենորդա ստուգիչ շախմատային տեղեկագրում, վորը կազմվում է ըստ դեբիտորների հաշվիների (տես հջ 77)։

Տեղեկագրերի գումարներն ամեն որ հաշվում են նրա հանրագումարները համեմատում առանձին մատյանների որվա ընդհանուր գումարների հետ։ Այդ համեմատությունը կատարվում է խմբավորման

ՀԱՇՎԻ Ն. թ.															
Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	Հ. Ա. թ. հաշվին	
Փաստաթղթի թիվ/Հ. Ա. թ.	Գումարը	Այլն													

թերթերի ողնությամբ։ Նրանց մեջ գրվում են գերեզի և կրկդիտի որագրային շրջանառությունների որվա հանրագումարներն ըստ այն բարանալիքն բոլոր հաշմանդարների, վորոնցով որվա ընթացքում գրանցումները կատարված ելին (տես եջ 78):

Ստանալով թերթիկը, վերահսկիչ խմբավորողը յուրաքանչյուր հաջի շրջանառությունների ընդհանրագումարները ստուգում և իր ստուգիչ տեղիկագրում յեղած նրանց գումարների հետ Բո՞չ ը տարբերություններն անմիջապես պարզվում և վերացվում են:

Յեթև խմբավորման թերթիկի և սոսովիչ տեղեկադրի գումարները հավասար են, նշանակում են քարտերի գրանցումները ճիշտ են:

Ստուգումը կատարելուց հետո գերանային հսկիչ տեղեկադրի հանրագումարները գրվում են որպա շրջանառությունների տեղեկագրում, վոր գրվում են հայիմների կրեդիտով (ձեր նույնն ե):

Այդ տեղեկագրի սյունակների հանրագումարները ամեն որ փոխանցվում են շախմատային բայանսի սլունակները:

Վերջինս ծառայում և վորպես նյութ տարեկան շախմատավիճականությունը կազմելու համար:

Սրանով վերջացնելով «պատճենհաշվառքի» մեթոդով հաշվապահական հաշվառումը կազմակերպելու տեխնիկայի հիմնական սկզբունքների նկարագրությունը, վարպես առանձին գործառնությունների հաշվառման ժամանակ վերջնիս գործազրության որինակներ, բերենք աշխատանքալին մի քանի հրահանգներ և ձեռք:

Այս բոլոր Նմուշները ցուցու կտան, թե ինչպիս է հնարքավոր լավագույն ձևով ոգտագործելու այն հեռանկարները, վոր հաջախոման տեխնիկալի առաջ բաց և անում «պատճենաշվառքը» (որինակները վերցված են նախկին «կաղմշեն»-ի և մեր առանձին ուսցիոնալիզա-առորների աշխատանքներից):

Σ Ρ Υ Σ Υ Τ Η

ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ա. Քարտարելի կազմակերպումը

1. Նյութերի հաշվապահական հաշվառումը պահեստներում տար-  
վում և ըստ անունների և տեսակների քարտերով և որագրով:  
Ամեն մի անուն նյութի չուրաքանչյուր տեսակի (բայց վոչ չա-  
փի) համար բացվում և առանձին քարտ: Յուրաքանչյուր պահելու  
վայրի (պահեստի) հաշվառումը տարվում և առանձին: Այդ պատճա-  
ռով ել միենալուն նյութերը, վորոնք սակայն գտնվում են տարբեր  
պահեստներում կարող են հաջվի առնվել տարբեր քարտերում:

2. Յուրաքանչյուր պահեստի քարտերը կազմում են առանձին քարտարկղ կամ լեթե վրու պահեստներում քարտերի քանակը բավական մեծ ե (մոտավորապես՝ 1000-ից ավելի) մի շարք քարտարկղները լնդհակառակը կարող են պատահել դեպքեր, լեռը այս կամ այն պահեստի քարտերի թիվը մեծ չե (վոչ ավելի 500-ից), այդ դեպքում մի քարտարկղում կարող ե լինել լերկու կամ ավելի պահեստների քարտեր: Սակայն քարտերն ըստ քարտարկղների բաշխելու համար ճիշճական չափանիշ պետք ե ծառայի մեկ քարտարկղավարի բաց թողնելու կարողությունը, վորը մոտավորապես որական 250-300 գրանցում ե:

Ուստի ամեն մի քարտարկղում պետք է ալինքան քարտ լինի, վոր ամենորև զբանցումների քանակը քարտերում համապատասխանի լուրաքանչյուր քարտարկղավարի բաց թողնելու կարողությանը. Ուստի, կարող են պատահել զեղքիր, յերբ քանակով քիչ, բայց մեծ թվով զբանցումներ ունեցող քարտերը կարողանան լրիվ չափով ծանրաբեռնել քարտարկղավարին, և ընդհակառակը՝ յերկուշերեք քարտարկղում տեղափորփած միայն քանակով շատ, բայց քիչ զբանցումներ ունեցող քարտերը կարողանան քարտարկղավարին տալ լրիվ ծանրաբեռնվածութույն. Քարտարկղները ճիշտ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ ե մոտավորապես հաշվել առաջիկա աշխատանքի ծավալը (անցյալի փորձով) և համապատասխան ձեռվ կառուցել քարտարկղները:

3. Տեսակավոր քարտերը բացվում և ցուցակադրվում են ռելես-  
տրներում ընդհանուր կարգով։ Յուրաքանչյուր պահեստի քարտարկղ-  
ներում քարտերը տեղավորվում են ըստ նյութերի խմբերի, յուրա-  
քանչյուր խմբի սահմաններում անունների ալբուբենով, իսկ յուրա-  
քանչյուր անվան սահմաններում՝ ըստ տեսակների ալբուբենի կամ  
համարների։

**Ծանօթություն.** Յեթև նյութերի մասը կմշակի անունների անվանակարգ, ապա խմբերի սահմաններում քարտերը պիտք ե տեղավորվեն անվանականդային համարների կարգով:

4. Քարտարկղների կառուցման տեխնիկան (բաժանիչների, ինդի-կատորների գործածությունը և այլն) նույնն է, ինչ վոր մնացած բուլոր քարտարկղների համար:

5. Մի բալանսային հաջվի ստեմաններում որագիրը պահպան էներգիայի լուրաքանչյուր խմբի համար առանձին:

Բ. Քարտերում յեկ մատյաններում գրանցումներ կատարելը

6. Քարտերը առաջին անգամ բանալիս նախ պետք է գրանցվեն պահեստներում և հղած նյութերի մնացորդները։ Մնացորդները փոխանցելիս մի բարձնային հաշվի սահմաններում նյութերի յուրաքանչյուր խմբի համար պահպում և առանձին որպեսիր։

7. Քարտերում և որագրում ընթացիկ գրանցումները կատարվում են ամեն որ պահեստի տեսակավորված և գնահատված փաստաթղթերի հիման վրա:

8. Քարտաերում և որագրերում մուտքի և լեզի գրանցումները  
կատարելիս ցուց և արվում քանակո, միավորի գինո և առաքարը:

9. Յեկը կամ մուտքը գրանցելու հետ միաժամանակ, դրա համապատակ նշանակված հատուկ սլունչակում, քարտարկղավարը դնում և մուտքի և սպառողների (իելքի) աղբյուրների անունը կամ համարը, միաստաթղթերի ցուցնունքների համաձայն: Սպառողների համարները կամ անունները նշանակելիս, ինչպես մուտքի (վերադարձնելու գեպքում), այնպես ել յելքի համար անհրաժեշտ և խնամքով հետեւել, վորպեսզի այդ հատկանիշները ջառորեն համապատասխանեն ծախքի որյեկտաներին (պատվերների, կարգագրերի և այլը, աշխատանքի տեսակները, ծախքերի հոռմածներու և այլն).

Ծանրություն. Սպասողների նշումն ըստ պատվերների կատարվում է կոտրակաների ձևով, համարիչում —պատվերի համարը, հայտաբերում —աշխատանքի տեսակների կառան անունները:

10. Բանի վոր նյութերի պահստացին հաջվառումը տարվում և կոչմիայն ըստ անունների և տեսակների,, այլ և ըստ չափերի, իսկ

հաշվապահական հաշվառումը՝ միայն անուններով և տեսակներով, ուստի վորեն նյութի միևնույն տեսակի (սորտի) տարբեր չափերի վերաբերյալ մի քանի փաստաթուղթ լինելու դեպքում, քարտարկղավարը գրանցում ե վոչ թե ըստ չափերի յուրաքանչյուր փաստաթուղթն առարձին առանձին, այլ միացնում և նրանց այն տեսակի սահմաններում, վորին այդ չափերը վերաբերում են, և փաստաթուղթերը նույնպես գրանցում ե ընդհանուր քանակով և գումարով (տես § 19):

11. Յուրաքանչյուր քարտին տվյալ որում վերաբերող բոլոր փաստաթուղթերը գրանցելուց հետո, քարտարկղավարը, առանց ապահովածից քարտերը հանելու, անմիջապես նրա վրա դուրս և բերում մնացորդը: Հետեւյալ որվա մնացորդը վորով մնացորդը («մնացորդ» սյունակում) հաշվեառ որվա մուտքի հետ գումարելու և նույն որվա լեզը հանելու միջոցով: Ասենորյա մնացորդը դուրս և բերվում միայն քանակով, առանց գնահատելու այն նախքան մատնանշված ձևով ստացված մնացորդը քարտում գրանցելը, քարտարկղավարը պետք է ստուգի նրա ճշտությունը:

12. Ստուգելով և քարտում գրելով հետեւյալ որվա մնացորդը, քարտարկղավարը քարտը հանում և և ապահովածից, դնում և այն քարտարկղում իր տեղը, վերջին փաստաթուղթը (շտեմպելով փոխադրում և «մնացորդների» հատուկ քարտարկղը, գտնում ըստ փաստաթուղթերի հերթականության հաջորդ քարտը և շարունակում տարածելը: Յուրաքանչյուր փաստաթուղթի վրա, քարտում նրա գրանցումը վերջացնելուց հետո, քարտարկղավարը դնում և այդ քարտի համարը դրա համար հատկացրած տեղում փաստաթուղթի վրա քարտի համարի տոկությունը նշան և, վոր փաստաթուղթը տարածված ե:

13. Մի պահեստի փաստաթուղթերի տարածումն ավարտելուց հետո, քարտարկղավարը որագրում հաշվում և մուտքի և լեզի գումարային սրունակները և ստացած հանրագումարներն ստուգում և տվյալ պահեստի որագրային շտեմպելի հանրագումարներով: Հանրագումարների համանկներու դեպքում շարունակվում ե հետեւյալ պահեստի փաստաթուղթերի տարածումը: Իսկ տարբերություն տալու դեպքում՝ սիրաները հայտնաբերվում և ուղղվում են:

14. Փաստաթուղթերը տարածելուց և գրանցումները ստուգելուց հետո, յուրաքանչյուր պահեստի ամեն մի որվա փաստաթուղթերը կարգում են (բրոցյուր կազմվում) այն կարգով, ինչ կարգով վոր նրանք ընտրված եյին տարածելու համար, և հանձնվում են արիստ վորտեղ նրանք պահվում են ժամանակագրական կարգով, յուրաքանչյուր պահեստին առանձին: Փաստաթուղթերի ամեն մի կաղողի վրա վերկից պետք և լինի պիտակ (յրլակ), վորի վրա պետք և մատնա-

նշված լինի—թիվը, ամենը, տարին և այն պահեստի անունը կամ համարը, վորին այդ փաստաթուղթերը վերաբերում են:

15. Յուրաքանչյուր սպառողին համար նյութերի ծախսը վոչ միայն գումարով, այլ յուրաքանչյուր նյութի քանակով, հայտնաբերելու անհրաժեշտություն լիդած դեպքում, տեսակային հաշվառման քարտերի հիման վրա «սպառողի համարը կամ անունը» սրունակով կազմվում և հատուկ տեղիկագիր:

Գ. Ճանապարհին գտնվող նյութերի հաշվառումը

17. Ճանապարհին գտնվող նյութերի հաշվառումը տարվում և նույն ձեր քարտերով:

Քարտերը բացվում են նյութեր ուղարկող յուրաքանչյուր մատակարարովի համար՝ համաձայն նրանից ստացված փաստաթուղթերի (լիրկաթուղարին բեռնադրեր, հաշիվներ և այլն):

18. Քարտերի տեքստում անպայման նշանակվում և փաստաթուղթի անունը, համարը և թվակերը, վորով նյութերը (կամ սարքերը ուղարկված են):

19. Ճանապարհին գտնվող նյութեր հաշիվը գերեսագրվում և յուրաքանչյուր մատակարարի հաշվով, վորի վերաբերմամբ նյութերն ստացվելու մոմենտին, պահեստների ընդունման ակտեր չկան: Մատակարարների հաշիվների մշակումը կատարվում և հաշվառահության հաշվարկային քարտարկղով:

20. Ճանապարհին գտնվող նյութեր հաշիվը կրեդիտագրվում և պահեստների ընդունման ակտերի հիման վրա, վորոնց մշակումը կատարվում և նյութերների քարտարկղում, վորտեղ և տարվում և անամուգ հաշվառումը (քարտի) ըստ ճանապարհին լիդած նյութերի հաշվի:

21. Մատակարարներից ստացած այն հաշիվները, վորոնք վերագրված են ճանապարհին գտնված նյութերի հաշվին, պահվում են նյութերների քարտարկղում առանձին թղթապանակում՝ մատակարարների այբուբենով: Նյութերի բաժնից ընդունման ակտերն առանց կից հաշիվների ստացվելու դեպքում, պահեստների փաստաթուղթերի ստուգումը կտառարող աշխատակիցը պարտավոր և ստուգել թե արդյոք մատակարարների հաշիվների թղթապանակում չկան ընդունման տվյալ համապատասխան հաշիվներ, վորոնք վերաբերում են ակտերին (համեմատելով յերկաթուղարին բեռնադրերը, նյութերի անունները և այլ հատկանիշները): Եեթե արդպիսի հաշիվներ կան, կցվում են ակտերին և ծառայում են վորպես հիմք նյութերը գնահատելու համար: Իսկ յիթե տվյալ ընդունման ակտերին վերաբերող հաշիվներ չկան,

իւանակում ե, թե ստացված նյութերի համար հաշիվը չեն ստացված և նրանք արդպիսի գեղքերում գնահատվում են պայմանագրերի գործարքների, պատվերների և այլն գներով:

22. Ընդհանուր գործառնութերի հաշվի համար տարվում և մի ընդհանուր մատյան:

### Հ Մ Ա Հ Ա Ն Գ

#### ԵԱԽԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՍԲԵՐՑԱԼ

##### I ընդհանուր կանոններ.

1. Մախքերի հաշվառումը կատարվում է քարտերով (և մատյաններով): Մախքերի լուրաքանչյուր տեսակի համար բացվում են քարտեր, համաձայն ծախքերի անվանուկարգի: Մախքերի քարտերի բացումը, ցուցակագրումը, ինչպես և քարտերի վրա գրանցելու տեխնիկան ու գրանցումների ստուգումը կատարվում ե պատճենահաշվառում ընդունված ընդհանուր կարգով:

Դրանցում 193 №	բովանդակու- թյուն	Դեբենտ		Կրեդիտ		Կրեդիտական դրամ	Տարեկան պարագաներ
		Տեսակ	Քառական	Տեսակ	Քառական		

##### II Աջակայտավարձի նաևվառում

2. Աջակայտավարձի հաշվառման համար քարտեր բացվում են աշխատավորների լուրաքանչյուր խմբի համար, այն ե՝

- ա) տրտավրական բանվորներ,
- բ) վարչաւատելինիկական ապարատ,
- շ) տնտեսական-գործավարական ապարատ,
- դ) հաշվային ապարատ
- ե) ստորին սպասարկու ապարատ:

3. Քարտերի ուղղահայաց սյունակներում աշխատավարձը բաշխվում է նրա առանձին տեսակներին.

ա) ժամանակավարձային աշխատավարձ,

բ) մասնագիտ. ֆոնդ.

շ) հավելում.

դ) գործարքային աշխատավարձ,

ե) արտաժամյա.

զ) պարապորդային

է) լրացուցիչ վճար դեռահասներին

ը) լրացուցիչ վճար մայր—կանանց:

Քարտերի մնացած սյունակները պահեստի սյունակներ են, բացի հիշատակվածներից այլ տեսակի աշխատավարձ լերեան գալու դեպքերի համար: Աշխատավարձի նոր տեսակի համար վորես քարտում ոգտագործված պահեստի սյունակը մնացած բոլոր քարտերում չի կարող ոգտագործվել աշխատավարձի վորես այլ տեսակի համար:

4. Լիավարտ ֆունկցիաներ ունեցող ձեռնարկության լուրաքանչյուր որգանի համար տարվում են առանձին քարտեր, բաժանելով այդ որգաններից լուրաքանչյուր աշխատակիցներին վերևում հիշատակված խմբերի:

5. Աշխատավարձի հաշվի համար ձեռնարկության բոլոր մասերի համար տարվում է ընդհանուր մատյան:

6. Քարտերի և մատյանների մեջ գրանցումը կատարվում է հաշվարկային-վճարման այն տեղեկագրերի հիման վրա, վորոնք համապատասխանորեն մշակված են հաշվարկային գրասենյակների վեհանուկների կողմից:

7) Ինչպես բանվորների և ծառայողների հաշվից աշխատավարձի հատկացումները կատարելը, այնպես ել այն համապատասխան ոպերատում և հաշվարկային հաշիվներին փոխանցելը կատարվում է միաժամանակ (լերկու կոնախրովկալով), լուրաքանչյուր առանձին հաշվարկային-վճարման տեղեկագրերը մշակելու մոմենտին: Ուստի աշխատավարձի հաշվով սալդո լինել չի կարող: Քարտերի մեջ գրանցումը կատարում են տեղեկագրերի ընդհանուր հանրագումարներով:

8. Քարտարկղի մեջ քարտերը տեղափորվում են ըստ ձեռնարկության բաժինների, իսկ լուրաքանչյուր բաժնի սահմաններում՝ ըստ աշխատավորների խմբերի:

##### III Լրացուցիչ աջակայտավարձի նաևվառումը

9. Լրացուցիչ աշխատավարձի հաշվառման համար քարտերը բացվում են նույն հատկանիշներով, ինչ վոր հիմանական աշխատա-

վարձիքարտերը, այսինքն՝ ըստ աշխատավորների խմբերի և ըստ մասերի: Ամբողջ հաշվի համար տարվում և մի ընդհանուր որագիր:

10. Քարտերի ուղղահայաց սյունակները հաշվի յեն առնում լրացուցիչ աշխատավարձի հետևյալ տեսակները:

ա) աշխատանքի չգալու վճարումներ.

բ) արձակուրդներ.

գ) ձրի կոմունալ ծառալություններ.

դ) կոմունալ ծախքերի վճարում.

ե) բնակարանի վարձ.

զ) աշխատանքի գնալու և տառն վերադառնալու ճանապարհատիրը:

է) չողտագործված արձակուրդի փոխատուցում.

ը) Արձակման նպաստ:

Ա. Քարտարկում քարտերը տեղավորվում են ըստ առանձին մասերի, իսկ լուրաքանչյուր մասի սահմաններում՝ ըստ աշխատավորների խմբերի:

12. Լրացուցիչ աշխատավարձին վերաբերող ծախքերի գրանցումը մասամբ կատարում են հաշվարկային—վճարման տեղեկագրերից, մասամբ ել այն տեղեկությունների հիման վրա, վոր ամեն ամիս ներկայացնում և կոմունալ տնտեսությունը ղեկավարող որդանը:

13. Լրացուցիչ աշխատավարձն ամեն ամիս դուրս և գրվում ոպերացիոն և ծախքի հաշիվների վրա, հաշվարկային գրասենյակիների ներկայացրած «Հիմնական աշխատավարձը բաշխելու տեղեկագրի» հիման վրա, հիմնական աշխատավարձի գումարի համեմատ: Հիմնական աշխատավարձի վրա ընկնող լրացուցիչ աշխատավարձի տոկոսի չափը վորոշվում և ըստ § 2-ում ցույց տված աշխատավորների լուրացանչյուր առանձին խմբի: Այդ նպատակով լուրաքանչյուր խմբի լրացուցիչ աշխատավարձի անալիտիք քարտերով հաշվում և դեբետի հանրագումարը, վորը բաժանվում և, համաձայն հիմնական աշխատավարձի անալիտիք քարտերի (ըստ աշխատավորների տվյալ խմբից հատկացումների) հիմնական աշխատավարձի ընդհանուր գումարի վրա:

14. Լրացուցիչ աշխատավարձի տոկոսների հայտնաբերված այն չափերը վոր ընկնում են աշխատավորների լուրաքանչյուր խմբի հիմնական աշխատավարձի վրա, հայտնվում են համապատասխան քարտարկուների վերահսկչներին: Որուելուների կամ ծախքերի անալիտիկ հաշվառման քարտերի հիման վրա, վերահսկչները կազմում են լրացուցիչ աշխատավարձը բաշխման տեղեկագրեր, այդ տեղեկագրերը յեն թարկվում են կոնտրովկայի և ընդհանուր կարգով հանձնում վերահսկչի խմբավորողին: Վերջինիս տեղեկագրերն անց և կացնում

ատուգիչ շախմատկալով, հետևելով, վորպեսզի լրացուցիչ աշխատավարձի ընդհանուր գումարն ըստ բաժանման տեղեկագրերի համընկնի այդ հաշվի հանրագումարի հետ:

#### IV Վարչա—սնտեսական ծախմեր.

15. Վարչա—տնտեսական ծախքերի հաշվառումը տարվում և ձեռարկության յուրաքանչյուր առանձին մասի համար:

16. Զեռնարկության յուրաքանչյուր մասի համար բացվում և քարտերի խումբ, վորոնց ուղղահայաց սյունակներում հաշվի յեն առնվում յուրաքանչյուր մասերի ծախքերի առանձին տարերը:

17. Քարտերը բացվում, ցուցակագրվում և տարվում են պատճենահաշվառքի համար սահմանված ընդհանուր կարգով: Որպես տարվում են յուրաքանչյուր մասի համար առանձին առանձին, սակայն առանց պահպանիլու նշանակված սյունակները, վորոնք որպերում դիմացրկվում են:

18. Քարտարկուներում քարտերը դասավորվում են ըստ ձեռնարկության մասերի, իսկ ամեն մի մասում՝ ծախքերի տարերի խմբերի կարգով:

Ընդունելով «պատճենահաշվառքը» վորպես այսորվա լավագույն հաշվային տեխնիկան, մենք նրա վրա, վորպես ամենակատարյալ մեթոդի վրա, կանգ առնել չենք կարող:

Ինչպես մեր տնտեսաբարական տեխնիկայի բոլոր բնագավառներում այսպիս ել հաշվառման ընագավառում մենք պետք ե ձգտենք լիովին մեքենայացման յենթարկելու այն Մեքենաների արմատացումը հաշվառման մեջ, ձեռքի աշխատանքը մեքենայականով փոխարինելու, մեխանիզմների աշխատանքով փոխարինելը մի խնդիր ե, վոր գրվոծ և խորհրդացին հաշվային աշխատավորների տռաջ կուսակցության, կառավարության և խորհրդային հասարակականության կողմից:

Այսոր այդ խնդիրը դեռևս լուծված չե: Աշխատանքը մեխանիզմի յինթարկող (հաշվային-գրամեքենաների, հաշվող մեքենաների և այլն) այն մեքենալացման մեքենաների (պատերսիկ, դոլերիսի հաշվային-անալիտիկ մեքենաների) ներմուծումը մեզ վրա չափազանց թանգ և նստում, ուստի և համարավոր չե հիմնվել դրա վրա:

Իսկ մեր գործարանները գենես նոր են սկսել յուրացնել այդ մեքենաների արտադրությունը և այս ընթացիկ արբում ձեռնարկված և հաշվային-անալիտիկ մեքենաներ արտադրելու դործը:

Մեր խոշոր հիմնարկությունների և ձեռնարկությունների հաշվառումը մեքենայացման վորպերը և մի քանի մասը հիմնարկու-

թյուններ և ձեռնարկություններ սպասարկող «հաշվալին ֆաբրիկա» ների ստեղծումը ցուց տվին թե գործը ճիշտ կազմակերպելու դեպքում մեքենաներում ինչպիսի վիթխարի հնարավորություններ են թագնված հաշվառումը ժամանակին, լրիվ կատարելու և հաշվալին կազմելը ազատադրելու տեսակետից:

Հաշվառման մեջ մեքենաների դերի մասին այս դիտողություններով ել մենք կոհմանափակվենք, չձեռնարկելով հաշվառման մեջ մեքենաների գործադրության նկարագրությունը, վորովնետև այդ ընդառավառ չափազանց ընդարձակ ե, վորպեսզի հնարավոր լինի տեղափորել այս հաշվառման ընդհանուր դասընթացի մեջ: Նա պահանջում և հատուկ ուսումնասիրություն և նկարագրություն, վորին նվիրված են զանազան հեղինակների ամբողջ մի շարք գրքեր, վորոնցից մի մասն արդեն տպագրված են և մի մասն ել պատրաստվում են առաջարկության (ԱՄՀՄ-ի ԲԳՏ ժողկոմատրի ՏՂԻ աշխատանքների Վատարը, Կհսելմանի գրքերը Մուն. Հոպկինսի գործադրության մասին և այլն):

Արկնօրյան հարցեր

1. Ի՞նչ առարկաներից ե բաղկացած «Պատճենաշվառքի» սարքավորումը:
2. Նկարագրեցնք պատճենահան տախտակի կառուցվածքը:
4. Ի՞նչու համար են հենման թիթեղները:
5. Ի՞նչ սլունակներ ունի շտամպը:
6. Ո՞վ ե լրացնում այն:
7. Ի՞նչպիսի գրվում թվակերը:
8. Ի՞նչու վերահսկիչներից ամեն մեկը չի կարող ցուց տալ փաստաթղթի թվակերն ու Ն-ը,
9. Ի՞նչ հիմնական բանկներ (և նրանց չափերը) են գործածվում «Պատճենաշվառքում»:
10. Ո՞վ ե պահում մաքուր բանկները, քարտերն ու մատյանները:
11. Ի՞նչ ձևով ե կատարվում քարտերի ցուցակադրումը և քարտերի ցուցակադրման ինչ լերկու յեղանակներ դուք դիտեք:
12. «Պատճենահաշվառքում» ինչ հիմնական կանոն ե պահպանվում:
13. Նկարագրեցք գրանցման տեխնիկան:
14. Ի՞նչ նիշով ե վերջանում գրանցումը:
15. «Պատճենահաշվառքում» սխալներ ուղղելու ինչ յեղանակներ են գործադրվում:

16. Նկարագրեցնք ամփոփման (հիսնական) հաշվառման կարգը:
17. Ի՞նչի համար ե պետք «հաշվի ստուգիչ Խ-ը սլունակը»:
18. Նկարագրեց հաշվալին կազմի յուրաքանչյուր աշխատավորի պրատականությունները:
19. Ի՞նչն ե հիմք ծառայում կազմակերպման լենթակա քարտարկների քանակը վորոշելիս:
20. Աշխատանքների ծավալն ինչպիսի և ազդում քարտարկների թվի վրա:
21. Գծադրի փաստագդղթերի շրջանառության սխեման ռազմական հաշվառքի ժամանակ:
22. Նորմալ գեպքում ինչքան ժամանակից հետո փաստաթուղթը պետք ե ընկնի հաշվալին արխիվ:

Ստուգիչ խնդիր

Տվեք պատճենահաշվառքի երրորդյունների համառոտ նկարագրությունը, համեմատած հաշվառման տոմարալին ձեռների հետ և շիֆրավորեք (4 խմբների սահմաններում) ձեռնարկության հաշվալին պլանից առնված հետևյալ ավանդները:

Գույք

Հաօիվ Շենքերի յեկ կառուցվածքների

Շենքեր և կառուցվածքներ սեփական

Շենքեր և կառուցվածքներ ի հաշիվ Բ.Կ.Բ. Փռնդի

Հաօիվ ինվենտարի յեկ սարքերի

Տնտեսական ինվենտար (կահալք)

փոխադրման միջոցներ.

Մեքենայական քաշող ուժ

կենդանի ինվենտար:

Հաօիվ Զօտիագործվաղ սարքեր

Պահեստի սարքեր և ինվենտար.

Տահագործումից հանված սարքեր և ինվենտար

Սարքեր և ինվենտար ճանապարհին

Հաօիվ հիմնական ներդրումներ գույքի մեջ

Նոր շենքերի և կառուցվածքների կառուցում

Մեքենաների և սարքերի սարքավորում

Շենքերի և կառուցվածքների հիմնական վերանորոգում

Չեռնարկության ընդարձակում և վերակառուցում:

ՀՀ Ազգային զրադարձն



NL0297295

